

938


Unkrautku

1 Unkrautku

U-68

Pföhlz
1889

4-4 w 87



2010

100
131-US

Հրատարակ. Թիֆլովի ընկ. հայերէն գրքերի հրատարակութեան

Franklin & Company's Patent
Department is open

10th March. No 25

U-68

4

ՍԱԿՐԱՏԵՍ

698



P w p q m w n b g

ՕՐ. ԹԵԿՂԻ ԱՏԵՓՈՅԵԱՆ

521

ԹԻԹԼԻՑ

3. Մարտիրոսեանցի տպարան

1889

ՅՈՅՆ ՓԻԼԻՍՈՓԱՅ

ՍՈԿ ՔԱՐՏԵԼԵՍԸ

I.

ՍՈԿՐԱՏԵՍԽԸ ԿՈՄԵՆՈԼՈՎ ԽՄԱՆՈԼ ԹԷ ԽԵԶՊԵՍ ՊԵՏՔ Ե
ԱՊՐԵՆ ՄՌՈՐԴԻԿ, ԼՍՈՒՄ Ե ԻՐ ԽՊՃԻ ՀԱՅՆԻՆ.

Սոկրատէսը ծնուեց Յունաստանի Աթէնք քա-
ղաքում: Սոկրատէսի հայրը հասարակ բանւոր — քար-
տաշ էր, իսկ մայրը՝ տատմէր: Հենց դրա համար էր
որ Սոկրատէսը շատ անզամ ասում էր, թէ իր մայ-
րը տատմէրսթիւնով օգնում է մարդկանց ծնուելուն
— նրանց աշխարհ գալուն, իսկ ինքն էլ անում է
նոյնը, միայն ոչ թէ օգնում է մարդկանց՝ այլ մարդ-
կային մտքի ծնուելուն:

Սոկրատէսի հայրը որդուն սովորեցնում էր իր
արհեստը և միաժամանակ ուղարկում էր նաև ուսում-
նարան՝ զրել-կարդալ և որիշ զիտութիւններ սովո-
րելու: Այդ ժամանակ Աթէնքում ամենքն էլ գրա-

Дозволено цензурою Тифлисъ, 21 июня 1889 года.

Типог. И. Мартиросианца, на Орб. ул., д. № 1/2.

գէտ էին, և կային բազմաթիւ զանազան ուսումնարաններ, որոնցից ամենաաղքատ ուսումարաններում երեխանները դաս էին առնում բակում, ուր և աւազի վրայ փայտով զրել-կարդալ էին սովորում. միքիչ հարուստ ուսումնարաններում սովորեցնում էին զրել-կարդալ, գծագրութիւն, հաշւապահութիւն և ուսունաւորներ արտասանել: Խոկ ամենաբարձր ուսումնարաններում աշակերտները սովորում էին այն ամենը, ինչ-որ այդ ժամանակ գիտէին Յոյները:

Սոկրատէսը հէնց փոքրուց էլ շատ բանգէտ - աչքաբաց երեխայ էր և կարդալու մեծ ոէր ունէր, և դրա համար Սոկրատէսի հայրը նրան տուեց ամենաբարձր ուսումնարան, որտեղ Սոկրատէսը սովորեց բոլոր գիտութիւնները և կարդաց այդ ժամանակւան ընտիր հեղինակների բոլոր երկերը:

Սոկրատէսն իր ուսումնաւարտելով վերադարձաւ հօր մօտ և սկսեց պարապել իր նախկին արհեստով - քարտաշութիւնով: Սոկրատէսը լսու բանում էր և բանելիս էլ յաճախ մտքի ետևից էր ընկնում. նա մտածում էր, թէ ինքը բոլոր գիտութիւնները սովորել է, իմանում է այն բոլորը, ինչ-որ մարդկանց սովորեցնում են, և սակայն ինքն ամենակին չի իմանում այն, ինչ-որ հարկաւոր է գիտենալ թէ իրան և թէ ուրիշ մարդկանց:

«Պէտք է, մտածում էր Սոկրատէսը, մտածել և գտնել, թէ ինչպէս պէտք է ապրեն մարդիկ: Թէ չէ բնչ դուրս եկաւ դրանից, որ մենք շատ բան ենք սովորում, երբ մեր սովորածից մեզ օգուտ

չկայ: Եթէ մենք մեր գիտութիւնով մինչև անգամ կարողանալինք երկնքի աստղերի համբարքն էլ գիտենալ ու ծովերի ջրի կաթիների թիւն էլ և ամենքիս էլ սովորեցնէին այն ամենը, ինչ-որ ես գիտեմ, դրանով մեր դրութիւնը դարձեալ չէր լսւանալու: Մենք բոլորս էլ գիշեր ու ցերեկ չարչարւում ենք՝ դէս ենք ընկնում, դէս ենք ընկնում, մեզանից ամեն մէկս աշխատում է իր համար, որ լսւ օր ունենայ, սակայն երբ գործը կատարում ենք, փոխանակ լսւի՝ մենք մեզ համար վատ և վնասակար բան ենք պատրաստում: Եւ մեզանից ոչ ոք չգիտէ, թէ իսկապէս մարդուս համար ո՞րն է լաւը և ո՞րն է վատը: Օրինակ՝ հէնց վերցնենք ինձ. ես բաւականին շատ բան եմ սովորել, բայց եթէ մէկը դար և ինձ հարցնէր, թէ մարդիկ ինչպէս պէտք է ապրեն, ես չէի իմանալ, թէ ինչ պատասխան տամ: Այն ինչ հէնց այդ մէկն էր անհրաժեշտ, որ մարդ իմանար: Ուսումիցս ստացած իմ բոլոր օգուտս միայն այն եղաւ, որ ես իմացայ, թէ մեր բոլոր սովորածները դատարկ բաներ են: Առաջ, երբ գեռ ոչինչ չգիտէի, ես կարծում եմ թէ գոնէ մի բան էլ է գիտեմ, խոկ հիմա հաստատ գիտեմ, որ ոչինչ չգիտեմ: Ուրեմն իմ ուսմանս միակ օգուտն այս է, որ այժմ ես միայն մի բան գիտեմ, այն է թէ՝ ոչինչ չգիտեմ: Ինձ աստուածների մասին սովորեցրել են, որ նրանք են ստեղծել մարդկանց, և վարձատրում են նրանց, եթէ նրանք ապրում են իրանց պատուէրի համաձայն և պատժում եթէ նրանք չեն անում այն, ինչ-որ

աստուածներն են հրամայում: Բայց հարց. արդեօք աստուածները մեղանից ինչ են ուզում, և ինչպէս կը հրամայէին, որ մենք ապրէինք»:

Եւ Սոկրատէսն սկսեց մէկ-մէկ մտաքերել այն ըոլորը, ինչ-որ իրան սովորցել էին աստուածների մասին: Իսկ Յոյները շատ աստուածներ ունէին: Մէկը՝ — որ համարւում էր զլխաւոր, երկնքի աստուածն էր, միւսը՝ ծովի, երրորդը՝ քամու, չորրորդն՝ արևի, հինգերորդը՝ պատերազմի, վեցերորդն՝ ուրախութեան, եօթերորդը՝ մահւան:

Կալին նաև աստուածուհիներ՝ — իմ աստութեան աստուածուհի, թշնամութեան աստուածուհի, երկրագործութեան աստուածուհի, ձեռագործութեան աստուածուհի և էլիս ուրիշ շատ աստուածուհիներ: Աստուածների մասին զբուած էր, որ բնակւում են երկրնքում, ինչպէս մարդկի երկրիս վրայ, ու թէ իրար և թէ մարդկանց թշնամանում են:

Դոյն իսկ Զևս (Յրամազդ) աստուածն իր թագաւորութիւնը նրանով սկսեց երկնքում, որ իր հարազատ Հօփը — Գժոխքին, երկնքից վայր ձգեց: Սոկրատէսն այս մտաքերեց, մտաքերեց նոյնպէս և այն, որ իրան սովորեցրել էին, թէ ինչպէս Զևս աստուածը կուռմ էր իր կնոջ հետ և խաբում էր նրան:

Թէպէտ դրանք աստուած էին կուռմ, բայց իրանց գործերը մարդկային գործեր էին:

Ուստի և Սոկրատէսը մտածեց. «Ո՞չ, այդ աստուածները ճշմարիտ աստուած չեն. դրանց միջոցով անկարելի է իմանալ, թէ ինչպէս պէտք է ապրեն

մարդիկ: Այդ աստուածները նոյնպիսի թոյլ արարած-ներ են, ինչպէս և մենք՝ մարդիկս. Հէսց իրանք՝ աստուածներն արգարութեան պահանջի համեմատ չեն վարւում. դրանցից չի կարելի սովորել՝ բարին չարից զանազանել: Մինչդեռ ճշմարիտ Աստուածը պէտք է արգար լինի և պիտի կարողանալ մարդկանց սովորեցնել, թէ ինչպէս պէտք է ապրեն»:

Եւ Սոկրատէսն սկսեց որոնել այդպիսի Աստծուն: Տարիներով չարչարուեց Սոկրատէսը, այնպէս որ գիշեր ցերեկ հանգստութիւն չունեցաւ իր այդ մտքերից: Բայց հասաւ ժամանակը և Սոկրատէսին յայտնուեց այն, ինչ-որ որոնում էր. նա գտաւ այն Աստծուն, ները. և նա գտաւ Նրան ոչ թէ մի ուրիշ տեղ, այլ հէսց իր խղճի մէջ:

Սոկրատէսը ճշմարիտ Աստծուն որոնելիս, շատ էր պատշաճում որ թէ գիշեր և թէ ցերեկ, երբ մտածում էր և կամենում էր այս կամ այն գործն սկսել, յանկարծ լսում էր իր խղճի ձայնը: Եթէ ձեռնարկելիք կարծ լսում էր իր լինում, այդ ձայնն ասում էր. «Սոկրատէս, արա»: Իսկ եթէ վատ էր լինում, ասում էր՝ «մի անիր, Սոկրատէս»: Եւ Սոկրատէսը սովորեց ականջ դնել այդ ձայնին, որ օրէցօր զօրեղանում էր նրա մէջ: Եւ այդ ձայնն ինչ-որ թելադրում էր էր նրա մէջ: Եւ այդ ձայնն ինչ-որ թելադրում էր Սոկրատէսին, բոլորն էլ ճշմարիտ էր դուրս գալիս:

Եւ Սոկրատէսն սկսեց մտմտալ. «Ո՞վ է այդ ձայնը, որ միշտ լաւն ու ճշմարիտն է թելադրում. պարզ է որ թելադրողը ես չեմ, այլ մի ուրիշը, բայց ախար

նվէ է: Այդ ձայնը միշտ ճշմարիտն է ասում, սովորեցնում է ինձ արդարութիւնով ապրել, ուստի՛ ես համզուած եմ, որ դա Աստծու ձայնը պիտի լինի»:

Եւ Սոկրատէսն այդ ձայնին այնուհետև անուանեց Աստուած: Իսկ այդ ձայնը ցոյց տուեց Սոկրատէսին այն, ինչ-որ նա փափագում էր գիտենալ, այսինքն թէ՝ ինչպէս պէտք է ապրեն մարդիկ:

Իսկ երբ Սոկրատէսը ճանաչեց այդ Աստծուն, այն ժամանակ տեսաւ որ ամեն մարդ էլ կարող է ճանաչել նրան և իրան պէս նա էլ կարող է նրանից իմանալ, թէ ինչպէս պէտք է ապրել:

Եւ Սոկրատէսն ինքն իրան ասաց. «Այս իմ իմացածս շատ մեծ բան է. և որովհետև ես վերահասուեղայ ճշմարտութեան և իմացալ բարին, ապա ուրեմն ես պէտք է ուրիշներին ևս սովորեցնեմ, որպէսզի նրանք ևս կարողանան լաւ ապրել»:

Երբոր Սոկրատէսը վերահասուեղաւ ալդքանին, նրա հայրը մեռած էր արդէն, ինքն էլ ամուսնացած և ունէր միքանի որդի: Երբ նա իր կնոջն ասաց, որ իրան յայտնուել է Աստծու ձայնը, կինը չհաւատաց. Իսկ երբ Սոկրատէսն ասաց նրան, որ ինքը մտադիր է այդ բանն ամենքին էլ ասել և ամենքին էլ սովորեցնել, կինն սկսեց նրան յորդորել, որ ետ կենալ այդ մտադրութիւնից: «Այդ մի անիր, ասում էր կինը. եթէ արհեստից ձեռք վերցնես և սկսես ժողովրդին սովորեցնել, գլխիդ փորձանք կըդալ և բացի դրանից իմ ու երեխանցս օրն էլ պիտի սեանալ—մենք ապրել չի պիտի կարողանանք: Մըի թող այդ քո գիտաւորու-

թիւնդ, առանց քեզ էլ ուսուցիչներ շատ կան»:

Բայց Սոկրատէսը կնոջ խօսքին ըսեց: «Նա տեսնում էր որ իր շուրջը ժողովուրդը տառապում է թրշւառութեան մէջ, որովհետև չգիտէ, թէ ինչպէս պէտք է ապրել. իսկ ինքը որ գիտէ այդ բանը, չպէտք է թաքցնի իր մէջ: Աստծու ձայնն էլ միւնոյն բանն էր ասում Սոկրատէսին:

Ճատ հին ժամանակներից սկսած մինչի Սոկրատէսի օրերը Յոյները շատ լաւ էին ապրում: Նրանց երկիրը տաք էր և հողը բարեբեր: Ամեն բան իրանք էին անում. հողը հերկում էին, ցանում էին, այդիներ էին տնկում, պարապում էին մեղուաբուծութիւնով, անասնապահութիւնով: Այդ ժամանակ ոչ հարուստ կար, ոչ աղքատ, ոչ տէր և ոչ ստրուկ, այլ բոլորն էլ ապրում էին հաւասարապէս:

Սակայն Յոյները լետոյ սկսեցին պատերազմել իրանց հարեւան ազգերի հետ և նեղացնել նրանց: Պատերազմի մէջ աւար առան թէ ոսկի, թէ արծաթ, և թէ ամեն տեսակ իրեղէններ ու անտուններ, գերի վերցրին մարդկանց ու դարձրին իրանց ստրուկները: Պատերազմների շնորհով Յոյները հարստացան, որից նրանց կեանքն սկսեց հետզհետէ փչանալ: Ով աներկիւդ և համարձակ էր՝ մտաւ զինուրական ծառայութեան, ով խելօք էր՝ կառավարութեան մէջ տեղ գտաւ, իսկ ով ճարպիկ էր՝ սկսեց պարապել վաճառականութիւնով: Ամենքն էլ ձեռք վերցրին ծանրաշխատանքից. նրանցից ոչ ոք այլևս չէր աշխատում: Սոկրատէսի ժամանակ Աթենացոց երկրում ըս-

տրուկներն աւելի շատ էին, քան թէ տէրերը. վեր-
ջինները հարիւր հազար հոդի էին, իսկ ստրուկ-
ները երեք հարիւր լիսուն հազար հոդի: Բոլոր գոր-
ծերն ստրուկներն էին կատարում, այնպէս որ յոյն
աղնւականներն ամօթ բան էին համարում աշխատելը:
Տէրերի միտքն ու հոգսը միայն այն էր, թէ ինչպէս
անեն որ շատ փող դիզեն առուտուրով, պատերազ-
մով կամ չաղ-չաղ պաշտօններով, ինչպէս ձեռք բերեն
իրանց համար ուժեղ ու լաւ գործ կատարող ստրուկներ
ու ստրկուհիներ, որ այնուհետև կարողանան ապրել
միայն իրանց զուարձութեան համար:

Եւ այդպէս էլ ապրում էին Յոյնները, ուստի բո-
լորվին զեխութեան մէջ ընկան. Էլ ոչ ոք չէր
մտածում որ ճշմարտութեամբ ապրի, իր եղբօրն օգ-
նի, ստրուկներին խղճայ, նրանց շատ չնեղացնի, տեղն
եկած ժամանակ ութիշի համար ծառալութիւն անէ.
Եկած ժամանակ մտածում էր, թէ ինչպէս անէ, որ
այլ ամեն մարդ մտածում էր, թէ ինչպէս անէ:
Կարողանայ միւսի գլխին նստել — իրան հպատակեցնել:

Տեսնում էր Սոկրատէսը, որ ժողովուրդը մոլոր-
ւելուց ինքն իրան նեղում ու չարչարում է. և Սոկ-
րատէսը դուրս էր զալիս հրապարակ և ամեն յարմար
քատէսը դուրս էր ժողովրդին այն, ինչ-որ իր ներ-
դէպում ասում էր ժողովրդին այն, ինչ-որ իր ներ-
դէպում ասում էր ժողովրդին այն, այսինքն թէ այդ
քին ձայնն իրան թելադրում էր, այսինքն թէ այդ-
մարդկանց կեանքը վատ կեանք է և որ դրանք այդ-
պէս չպէտք է ապրեն:

II.

ՄԱՐԴԻ ԻՆՉՊէՍ ՊԵՏՔ Է ԱՊՐԻ.

Մի անգամ Սոկրատէսը պատահեց հրապարա-
րակի վրայ մի երիտասարդ և հարուստ աղնականի,
Արիստոն անունով: Արիստոնը լիմար և չար մարդ չէր,
բայց ապրում էր այնպէս, ինչպէս բոլոր հարուստ
Յոյնները. նա ոչ մի գործ չէր կատարում, այլ միայն
ապրում էր իր զուարձութեան համար:

Սոկրատէսը նրան պատահելով սկսեց հետը խօ-
սել: Ճատ մարդիկ էլ հաւաքուեցան և սկսեցին լսել
նրանց: Սոկրատէսն ասում է.

— Բարով, Արիստոն, այս ուր ես, երկար ժա-
մանակ է որ չես երևում. երկի գործով զբաղուած ես
և ժամանակ չունիս մեզ պէս դատարկ ման գալու:

— Զէ, պատասխանում է Արիստոնը, ոչ մի գործ
չունիմ և ինչ գործ պիտի ունենամ, ոչ գործ կայ
անելու և ոչ կարիք կայ: Առանց գործ անելու էլ
լաւ եմ ապրում: Ես հօ աղքատ չեմ, փառք աս-
տուածներին, հարուստ մարդ հմ. ուրեմն ինչ կա-
րիք կայ, որ աշխատեմ կամ չարչարուեմ: Ուրիշ բան
է, եթէ ինձ կառավարութեան մէջ գործ յանձնէին,
կարելի է իմ պատվի և փառքի համար ընդունէի.
բայց այդ էլ ով գիտէ՝ կանէի արգեօք: Հէնց որ մի
ծառալութիւն յանձն առնես թէ չէ, չորս կողմէց
հոգսերի մէջ պիտի խեղզուես: Ուզես չուզես պիտի

գնաս, գաս, լսես, խօսես կամ գրես. իսկ այդ բոլորն ինձ համար աւելորդ գլխացաւանքութիւն է, ինչու համար ես ինձ պիտի նեղութիւն տամ: Փող ունիմ, ստրուկներ՝ որքան ասես, ինչ ուզենամ, կարող եմ ունենալ. ապրում եմ ուրախ, անհոգ. ինչս է պակաս:

— Ճշմարիտ է, ոչ մի հոգս չունիս, բայց լաւ կըլինի, թէ դու քո ամբողջ կեանքդ այդպէս անցկացնես:

— Եւ ինչու պէտք է վաս լինի. ուրիշ ինչ կայ աւելի լաւ, քան ողջ կեանքդ քէֆի մէջ անցկացնելը:

— Հենց բանն էլ դրանումն է, թէ արդեօք լաւ բան է այդպիսի կեանքը, ասաց Սոկրատէսը: Ամեն բան, ինչ-որ մեզ լաւ է թւում, իսկապէս միշտ լաւ չէ: Կմել ես չերքուկէսի մասին:

— Ո՞վ չէ լսել չերքուկէսի մասին, թէ ինչպիսի քաջ տղամարդ է եղել նա, ինչպիսի փառաւոր դործեր է կատարել և ինչպիսի փառք վաստակել, ասաց Արիստոնը:

— Լաւ. բայց լսել ես, թէ ինչպէս է նա իր համար կեանքի ճանապարհ ընտրել, ասաց Սոկրատէսը:

— Այդ չեմ լսել:

— Չես լսել. լաւ. ես քեզ կը պատմեմ, ասաց Սոկրատէսը. հը՞, ուզում ես պատմեմ:

— Պատմիր, պատմիր; Սոկրատէս, ասացին միւս ունկնդիրները և նա սկսեց պատմել.

« Լսիր ուրեմն. երբ չերքուկէսը հասակն առաւ, մտածութեան մէջ ընկաւ, թէ իր համար ինչպիսի կեանք ընտրէ: Եւ նա գնաց զբունելու և շարունակ

ինքն իրան մտամտում էր, թէ ինչ անէ և ինչպէս ապրի: Նա գնաց գնաց և մտաւ մի ընգարձակ գաշտ. տեսնում է դէպի իրան են գալիս երկու կին: Հիացաւ չերքուկէսը և ինքն շտապեց նրանց գիմաւորելու: Կանացից մէկը ոչ մեծ էր, ոչ փոքր, ոչ հաստ էր, ոչ բարակ, ոչ էլ զուգուած, այլ հագնուած էր պարզ, քայլում էր հանդարտ և չէր շտապում. իսկ միւսը բարձրահասակ էր, հաստլիկ, շքեղ հազնուած և երեսն էլ սնդուրած: Առաջինը քայլում էր ուզիդ և չէր նայում դէս ու դէն. իսկ միւսը շարունակ կոտրատում էր, կամ իրան կոկում, նայում էր դէս ու դէն և կամ իր ստուերին: Ահա սրանք մօտեցան չերքուկէսին, շքեղ հագնուածը մի ոստիւն արաւ և կանգնեց ուղիղ չերքուկէսի առջեւը:

— Ես գիտեմ, ասաց նա, դու մտածում ես, թէ ինչ կեանք ընտրես և ինչ ճանապարհով գնաս: Ահա ես եկել եմ, որ քեզ ցոյց տամ իմ ճանապարհը, որ ամենից ընտրին է: Եթէ ինձ հետևես, դու կըլինիս ուրախ և դժուարութեան չես հանդիպիլ. ոչ աշխատանք կրտեսնես, ոչ հոգս և ոչ էլ տրտմութիւն: Մէկ ուրախութիւնից կանցնես միւսին և քո միակ հոգսը միայն այն կըլինի, որ ընտրես, թէ որ կերակուրն է համեղ, որ զինին է լաւ, որ անկողինն է փափուկ և որ ուրախութիւնն է աւելի ուրախ: Իսկ աշխատանք այն կըլինի, որ հրամայես այն, ինչ-որ մտքիցդ կանցնի: Ամեն բան, ինչ-որ դու հրամայես, ուրիշները կանեն քեզ համար:

« Հաստլիկ կնոջ խոստումներին չերքուկէսը հա-

ւանեց և որպէսզի նրան իր մտքիցը չհանէ, հարց-
րեց նրա անունը:

—Իմ իսկական անունս է բախտաւորութիւն,
ասաց այն կինը, բայց նախանձորդներս՝ դրդուած չա-
րութիւնից ինձ անուանում են շռայլութիւն:

«Առաջին կինը միւսի խօսած ժամանակը հան-
գիստ կանգնած էր, բայց երբ հաստիկ կինը վեր-
ջացրեց, նա նոյնպէս մկնեց խօսել և ասաց.

—Ամենից առաջ ես կասեմ իմ անունը, ինձ
ասում են արդարութիւն (անմեղութիւն), ուրիշ ա-
նուն ես չունիմ: Ես չեմ հրապուրելու քեզ մոլորու-
թիւններով, ինչպէս սա արաւ, այլ կասեմ ուղիղը,
թէ ինչի մէջ է կայանում մարդուս երջանկութիւնը. և
դու կրտեսնես, որ միայն ինձ հետեւելով դու կրլինիս
երջանիկ մարդ: Դու էլ լաւ գիտես, որ որպէսզի հողը
պտուղ տայ, պէտք է նրան մշակել, եթէ մարդ ցան-
կանում է տաւար ունենալ, այդ մասին պիտի հոգալ,
որպէսզի տունը լաւ լինի, պէտք է քարերը տաշել և
կոկել, որպէսզի մարդիկ քեզ յարգեն, պէտք է նրանց
համար աշխատես, որպէսզի աստուածները միրեն
քեզ, պէտք է նրանց կամքը կատարես: Իսկ նրանց
կամքն այն է, որ դու քո աշխատանքով վարձատրես
ուրիշների աշխատանքը: Այդ ճանապարհով ես քեզ
կրտեսնեմ և միայն այդ ճանապարհի վրայ կայ եր-
ջանկութիւն:

«Քեռ առաջին կինն իր խօսքը չէր վերջացրել, որ
երկրորդը դարձեալ վեր ցատկեց և ասաց.

—Ճեսնում ես, չերքուլէս, ինչպիսի դժուար ճա-

նապարհով է ուզում քեզ տանել: Աշխատանք, աշ-
խատանք և շարունակ աշխատանք է նա քեզ խոս-
տանում: Իսկ ուրախութիւն կրլինի թէ ոչ, յախնի
չէ. ուրեմն աւելի լաւ չէ, որ ինձ հետևես: Ինձ հե-
տևելով աշխատանք չես ունենալ, այլ հենց առաջի
քայլումդ ուրախութիւն կրտեսնես: Քաղցր կուտես,
համեղ կրխմես և անուշ քուն կրլինես: Գնանք հետս,
ասաց պճնաղարդը և ուզում էր բռնել չերքուլէսի
Ճեռքից:

—Սպասիր, ասաց առաջինը, դու ասում ես
քաղցր ուտել և խմել, և դու կարծում ես այդ լաւ
բան է. այն ինչ դու ոչ ուտել զիտես, ոչ խմել: Դու
ուտում եմ, խմում ես՝ միշտ անժամանակ, դու ու-
տում ես և խմում ես ոչ թէ նրա համար, որ կա-
րիք ես զգում, այլ պարապութիւնից և տխրութիւ-
նից չզիտես ինչ անես: Եւ դու դեռ չզիտես ամենա-
հազւագիւտ կերակուրների և թանկագին զինիների
իսկական համը: Դու խոստանում ես նրան, որ նա
անուշ կրքնի միշտ, բայց ինքդ քնել անգամ չես
իմանում: Վունդ գալու համար դու տակդ ես զցում
փափուկ անկրղիններ և նոյնպիսի բարձեր դարսում,
բայց նրանց վրայ անգամ չես կարողանում քնել, որով-
հետեւ դու պատկում ես քնելու միայն ձանրութիւ-
նից ստիպուած: Մարդ լաւ կըքնի միայն աշխատանքից
յետոյ, իսկ դու ինչպէս կարող ես քնել, քանի-որ հան-
գըստանալու կարօտութիւն չունիս: Ես ճանաչում եմ
քեզ, ճանաչում եմ և այն թշւառներին, որոնց դու
կորցրիր քո դատարկ հրապուրներով ու կեանքի քաղ-

ըռութիւններով։ Միթէ քիչ են այնպիսիները, որոնք այժմ անիծում են քեզ, որ քո պատճառով փշացրին իրանց երիտասարդութիւնը։ Հենց դրա համար է որ ազնիւ մարդիկ քեզ հալածում են և շռայլութիւն ու անառակութիւն անուանում քեզ։ Իսկ ես ինձ հետևողներից ոչ մէկին չեմ խաբել։ Այն ամենքը, որոնք երիտասարդ ժամանակից ինձ հետևեցան, նըրանք բոլորն էլ կազդուրուեցան հոգով ու մարմնով, ամենքն էլ իմ ցոյց տուած ճանապարհի վրայ աւելի ուրախութիւն տեսան, քան թէ տրտմութիւն, նըրանց բոլորին ուրիշները պատճում են ու յարգում, բոլորն էլ գոհ սրտով են լիշում իրանց անցեալը և հանդիստ սրտով սպասում են մահւան։ Գեղանից տրտնջում են, իսկ ինձ ոչ ոք երբէք չի մեղադրել խարեբայութեանս համար, ամենքն ինձ յարգում են և արդարութիւն անուանում։ Ահա թէ որպիսի կեանք եմ քեզ առաջարկում, չերքուկէս։

«Չերքուկէսն ալլես չմտածեց և կեանքի մէջ հետևեց արդարութեանը, աշխատեց մարդկանց համար, ծառալեց թէ նրանց, թէ աստուածներին և ինքն էլ երջանկացաւ»։

Սոկրատէսը վերջացնելով իր պատմութիւնը, ասաց Արխտոնին. «Մտածիր և դու, Արխտոն. այն երկուսից որին պէտք է հետևել՝ շռայլութեանը, թէ արդարութեանը։ Վճռիր քանի դեռ ուշ չէ, որպէսզի ծերութեանդ հասակում չփղջաս լիմարութեանդ համար և նախ քան քեզ, մարդկանց և աստուածներին չհաճոյացած՝ չմեռնես»։

III.

Ի՞նչՊէս ՊէՏՔ է ԿԱՌԱՎԱՐԵԼ ԺՈՂՈՎՐԴՅԱՆ Ա. ԱՅԱՍ

Մի անդամ Սոկրատէսը լսեց, որ Գլավկոն անունով մէկ հարուստ մարդ ուզում է ժողովրդի կառավարիչ դառնալ։ Սոկրատէսը նրան ճանաչում էր և գիտէր, որ նա թէ անփորձ և թէ անփոլթ մարդ է, ուստի ուզեց նրան յանդիմանել։

Սոկրատէսը հանդիպեց նրան քաղաքային հրապարակի վրայ։ Գլավկոնն այնտեղ կանգնած էր ժողովրդի մէջ և մարդիկ յարգանքով խօսում էին նրա հետ։ Ամենքն էլ սպասում էին, որ նա շուտով կառավարիչ կըդառնալ և այն ժամանակ իրանցից իւրաքանչիւրին նա պէտք կըդայ։

Գլավկոնն սպասում էր, որ իրան կընտրեն և ինքը դրանով հպարտանում էր ժողովրդի առաջ։

Մօտեցաւ նրան Սոկրատէսը։

— Բարով, Գլավկոն, ասաց նա. Ես լսել եմ, որ դու մեզ վրայ կառավարիչ ես լինելու։

— Այո, յոյս ունիմ, պատախանեց Գլավկոնը։

— Ինչո՞ւ չէ, լաւ բան է, ասաց Սոկրատէսը։ Այն ժամանակ մեծ իշխանութիւն կունենաս և կարող կըլինիս մարդկանց բարութիւն անել։ Եւ կըկոչակուի անունդ։

— Իհարկէ, այդպէս է, ասաց Գլավկոնը։ Ինչո՞ւ ես ևս չպէտք է լաւ կառավարիչ լինիմ։

— Հաւ կառավարիչը նա է, ասաց Սոկրատէսը,
ով որ իր ժողովրդին շատ օգուտ է տալիս: Այնպէս չէ:

— Յայտնի բան է, պատասխանեց Գլավլոնը:

— Ուրեմն պատմիք մեզ, թէ ժողովրդիդ ինչ
օգուտ ես ուզում տալ և ինչից ես սկսելու:

Գլավլոնը շփոթուեց և չկարողացաւ միանգամից
պատասխանեց: Նա դեռ չէր մտածել, թէ ինչից է սկսե-
լու գործը: Մինչդեռ նա մտածում էր, Սոկրատէսն
ասաց.

— Ի՞նչ մտածութեան մէջ ընկար, միթէ դըժ-
ւար է հասկանալ, թէ ինչով պէտք է ժողովրդին
օդնել: Չէ որ ժողովաւրդն էլ բաղկացած է այնպի-
սի մարդկանցից, ինչպէս մենք բռնորս ենք: Եթէ
դու ուզենաս բարեկամիդ լաւութիւն անել, կարծեմ
առաջի գործդ այն կըլինի, որ դու կաշխատես նրա
ունեցածն աւելացնել—նրան հարստացնել:

— Պարզ բան է, պատասխանեց Գլավլոնը:

— Նշանակում է, ասաց Սոկրատէսը, միւսոյնը
պէտք է անել և ժողովրդի համար: Ժողովրդին բա-
րիք անել, նշանակում է այնպէս անել, որ բոլորն
էլ հարուստ լինին: Այնպէս չէ:

— Իհարկէ, ալդպէս է, ասաց Գլավլոնը:

— Բայց ինչպէս անել, որ ամենքն էլ հարստա-
նան, հարցրեց Սոկրատէսը: Ես այսպէս եմ կարծում,
որ ալդպէս լինելու համար, պէտք է որ ամենքն էլ
շատ մուտք ունենան և քիչ ծախս: Դու ինչ կասես:

— Ես ես ալդպէս եմ կարծում, պատասխանեց
Գլավլոնը:

— Ուրեմն ասա ինձ, Գլավլոն, թէ այժմ ժողո-
վրդի եկամուտը որտեղից է և որքան: Անշուշտ դու
այս ամենն արդէն զիտես:

— Ո՛չ, ես այդ չղիտեմ, ասաց Գլավլոնը. այդ
մասին ես դեռ չեմ մտածել:

— Ասենք դրա մասին դեռ չես մտածել, ասաց
Սոկրատէսը, բայց անշուշտ մտածած կրիխիս, թէ ժո-
ղովուրդը որքան ծախս ունի: Եւ եթէ աւելորդ ծախ-
սեր կան, երկւի դու մտածել ես, ինչպէս պէտք է
նրանց քչացնել:

— Ո՛չ, ասաց Գլավլոնը, դրա համար ես այժմ չեմ
կարող պատասխանել: Այդ մասին ես ես դեռ չեմ
մտածել:

— Դու այդ մասին ես դեռ չես մտածել, կրկնեց
Սոկրատէսը, ինչ կայ որ, յետոյ էլ կարող ես: Երեկի դու
շարունակ այն բանի մասին էիր մտածում, թէ ժո-
ղովրդին ինչով հարստացնես. ինչ ես մտածել այդ
մասին: Ի՞նչ ես կարծում, ինչով կարելի է հարս-
տացնել ժողովրդին:

— Իմ կարծիքով, ասաց Գլավլոնը, ժողովրդին
հարստացնելու ամենալաւ միջոցը պատերազմն է:
Պէտք է տիրել ուրիշ ազգերին, խլել նրանց բոլոր
հարստութիւնն ու բաժանել մեր ժողովրդին:

— Ճատ ուղիղ է, ասաց Սոկրատէսը, ժողովրդին
հարստացնելու ամենակարճ միջոցն այդ է, սակայն
այս էլ կայ, որ ուրիշ ազգերին նուածելու փոխարէն,
կարող ես պատերազմի համար իգուր ծախսեր անել
թէ մարդկանցով և թէ փողով, չէ որ այդ զէպ-

քում ժողովուրդը ոչնչ չէ աշխատում և ալեմն
պիտի աղքատանայ:

— Այս, այդպէս է, ասաց Գլավկոնը. բայց պա-
տերազմը պէտք է սկսել միայն այն ժամանակ, երբ
մարդ հաստատ գիտէ, որ ինքը կըլաղթի և ոչ թէ
իրան կըլաղթեն:

— Ասել է թէ, վրաբերաւ Սոկրատէսը, նախ
քան պատերազմն սկսելը, անհստեշտ է որ մարդ
ամենահաստատ տեղեկութիւններ ունենայ իր ժողո-
վրդի և իր հակառակորդի ուժերի մասին:

— Յալտնի բան է, պէտք է, ասաց Գլավկոնը:

— Ուրեմն, ասա, Գլավկոն, ի՞նչքան պատրաստի
ոլժ ունինք մենք պատերազմի համար և ի՞նչ ոլժ
ունի այն հակառակորդը, որի դէմ դու ուզում ես.
պատերազմել:

— Այշտը չեմ կարող ասել, ասաց Գլավկոնը,
անգիր չգիտեմ:

— Երևի դու այդ ցուցակաղբած կըլինիս, բեր
ուրեմն, խնդրեմ, մենք կըկարդանք և կըհաշւենք,
ասաց Սոկրատէսը:

— Աչ, ես որևէ ցուցակ չունիմ կազմած այդ
մասին, ասաց Գլավկոնը, թշնամու զօրքը հօ չի
կարելի հաշւել:

— Ճատ ցաւալի է, ասաց Սոկրատէսը, որով-
հեաւ եթէ թշնամու զօրքը չի կարելի հաշւել, ա-
սել թէ չի կարելի նաև առաջուց ասել՝ մենք կը-
լաղթենք, թէ մեզ կըլաղթեն. ուրեմն քո մտածած
միջոց՝ ժողովրդին հարստացնելու համար այնքան

էլ յուսալի բան չէ: Կըհարստացնես, թէ ոչ—յայտ-
նի չէ, իսկ ժողովրդից անշուշտ շատերին կըկոր-
ցնես, և փոխանակ հարստացնելու, կաղքատացնես:
Ուրեմն մենք այդ թողնենք, ասաց Սոկրատէսը. դու
այժմս այն ասա մեզ, Գլավկոն, թէ որքան հաց է
հարկաւոր ժողովրդին կերակրելու համար: Հացի ա-
ռատութիւնն այս տարի ի՞նչ դրութեան մէջ է և
արգեօք մինչև նոր հունձը հինը կըրաւականանայ
ամենքին: Իհարկէ որ այդ մասին դու մտածել ես:

— Ո՛չ այդ մասին ես դեռ տեղեկութիւն չեմ
հաւաքել,—պատասխանեց Գլավկոնը և մի քիչ լը-
ռելուց յետոյ շարունակեց.—Դու, հէնց ամեն բանի
մասին այդպէս հետաքրքիր ես, Սոկրատէս. այդ ուր
կերթար, եթէ ամենքս քեզպէս մտածէինք ու հաշ-
ւեինք, այն ժամանակ ժողովրդին կառավարելը մի
շատ դժուար բան կըլինէր:

— Իսկ դու կարծում էիր հեշտ է, ասաց Սոկ-
րատէսը: Մի վերջին հարց էլ, Գլավկոն. ես այնպէս
լսեցի, որ դու սկսել էիր օգնել հօրեղբօրդ տնտեսու-
թեան մէջ և յետոյ թողել: Ինչո՞ւ թողեր:

— Ինձ համար դժուար էր այդ բանը, պատաս-
խանեց Գլավկոնը, որովհետև թէ գործը շատ էր
և թէ հօրեղբարս ինձ չէր լսում:

— Տեսնում ես, դու մի տուն չես կարողացել
կառավարել, ու հիմա ուզում ես մի ամբողջ ժողո-
վուրդ կառավարել: Ամեն զօրծի ես կարելի է ձեռք
տալ, բայց յաջողութիւն միայն նա կունենայ, ով որ
զործի հետ լաւ ծանօթ է: Աշխատիր, որ փառքի և

պատւի փոխանակ անբախտութեան չհանդիպես:
Գնա, գեռ առաջ տեղեկացիր այն ամենի մասին, որ
ես քեզ հարցը և յետոյ արդէն մտածիր ժողովուրդ
կառավարելու վրայ:

Դլավկոնը լուռ հեռացաւ Սոկրատէսի մօտից և
դրանից յետոյ թողեց կառավարիչ դառնալու միտքը:

IV.

Ո՞վ է Ա.Ի.ԵԼԻ Հ.Ռ.Ի.՝ ՍՏՐՈՒԿԻ Թէ Տէ՛ր.

Մի անգամ Սոկրատէսի մօտ եկաւ նրա հարեւան Արիստարիսը և սկսեց իր վիճակից գանգատուել:
— Չգիտեմ ինչ անեմ, որ վիճակս լաւացնեմ,
ասում է նա. ես մի ժամանակ հարուստ էի և վաճառականութիւնով էի պարապում, բայց գործերս վատ գնացին և ես սնանկացալ: Այս անբախտութեանս վրայ աւելացաւ նաև պատերազմը, որի մէջ սպանուցան աղքականներս և ես ստիպուած եղաւ ինձ մօտ քերել նրանց ալրիներին ու որբերին: Այժմ տանս մէջ տասնուշորս հոգի կան: Ես ինչպէս կերակրեմ այդ ամենքին: Անբախտութիւն անբախտութեան յետելից: Հգիտեմ թէ ինչ անեմ:

— Ես ցաւում եմ քեզ համար, բարեկամ, ասաց Սոկրատէսը. բայց դու ինչ ես կարծում, ինչ ես մըտազիը անելու:

— Ուզում եմ փող վերցնել ուրիշից և դարձեալ

վաճառականութիւնով պարապել. բայց չեն տալիս, որովհետեւ գիտեն, որ գործերս վատ են գնում:

Գլուխը շարժեց Սոկրատէսը և այսաց.

— Այս, հանաք բան չէ տասնուշորս հոգու կերակրելը: Բայց ահա քո հարեւանի տանը քսան հոգուց աւելի են և բոլորն էլ կուշտ են, և մինչեւ անգամ փող էլ են ետ գցում:

— Այս թէ դու էլ համեմատութիւն արիք, ասաց Արիստարիսը: Հարեւանս մի մարդ է, բայց 19 հոգի ստրուկ ունի: Նրա ստրուկներն աւելի աշխատում են, քան թէ ուտում: Այս ինչ իմ մօտինս տասնուշորս հոգի ազատ Յոյներ են:

— Ի՞նչով են զանազանում ազատ Յոյներն ստրուկներից ասաց Սոկրատէսը. Երևի նրանով, որ նրանք աւելի լաւ են ստրուկներից:

— Յալտնի բան է, նրանք ազատ Յոյներ են, իսկ սրանք՝ ստրուկներ:

— Խօսքով այդպէս է դուրս գալիս, ասաց Սոկրատէսը, որ ազատներն աւելի լաւ են, բայց գործով ուրիշ բան է դուրս գալիս: Դու ասում ես որ հարեւանդ նրանով է լաւ քեզանից, որ ստրուկներ ունի, իսկ դու ունիս ազատ Յոյներ: Երևում է ստրուկները գիտեն աշխատել, իսկ ազատները՝ ոչ:

— Իմոնքս էլ կը կարողանային, եթէ որ ստիպւած լինէին, բայց ես հօ չեմ կարող նրանց ստիպել: Նրանք անուանի տոհմից են և ինձ աղքակից, ես ինչպէս նրանց ստիպեմ աշխատելու: Դրանով ես

Նրանց վիրաւորած կըլինիմ. Նրանք կըսկսեն տրտըն-
ջալ: Այդ անկարելի է:

— Միթէ այժմ քո տան մէջ տրտունջներ չկան,
Հարցընց Սոկրատէսը. իրար հետ սիրով էք ապրում:

— Ի՞նչ սէր, պատասխանեց Արիստարիսը, միայն
տրտունջ և վէճ եմ լսում:

— Նշանակում է առանց աշխատանքի էլ ձեր
մէջ համաձայնութիւն չկայ և ուտելու էլ բան չու-
նիք: Զէ՞ որ քո ազգականների անուանի տոհմից լի-
նելը հաց ու սէր չէ տալիս: Լաւ չէր լինի արդեօք,
որ դու նրանցից ամեն մէկին իր ոյժի համեմատ
աշխատանք տայիր:

— Ես այդպէս կանէի, ասաց Արիստարիսը, բայց
այդ նրանց գիւր չի գալ. գուցէ քաղաքացիք էլ ինձ
դատապարտեն:

— Իսկ հիմա չե՞ն դատապարտում, հարցընց Սոկ-
րատէսը:

— Այս, հիմա էլ կան բարեհողի մարդիկ, որոնք
դատապարտում են ինձ խեղճութեանս համար. դա-
տապարտում են, բայց փող չե՞ն տալիս, որ ես նո-
րից ոտի կանգնեմ:

— Հէնց բանն էլ դրանումն է, ասաց Սոկրա-
տէսը. հապա մէկ փորձիր նրանց աշխատանք տալ,
գուցէ աւելի լաւ բան դուրս գայ:

Արիստարիսը լսեց Սոկրատէսին:

Կէս տարուց յետոյ երբ Սոկրատէսը դարձեալ
հանդիպեց Արիստարիսին, հարցընց նրա կենցաղա-
վարութեան մասին:

— Ճատ լաւ եմ, ասաց Արիստարիսը, և միշտ էլ
քեզանից շնորհակալ: Այն ժամանակ ես քեզ լսեցի
և այժմ գործելու շատ լաւ են: Մի մարդ ինձ հաւատաց
և պարտքով բարդ տուեց. իմ տնեցիք մանեցին այն
բուրգը, մահուդ գործեցին և ծախու հագուստներ կա-
րեցին: Այդ հազուստները ես տարայ ծախեցի, բրդի
գինը դուրս գալուց յետոյ գեռ վաստակ էլ մնաց:
Այն ժամանակից սկսած ամենքս այդ գործով ենք պա-
րապում և մենք բոլորս էլ կուշտ ենք, փող ունինք
և ազատ ենք կուներից:

— Իսկ մարդիկ ինչ են ասում, հարցընց Սոկ-
րատէսը:

— Մարդիկ այլևս ինձ չեն դատապարտում, ա-
սաց Արիստարիսը և ժպտաց:

Մի անգամ Սոկրատէսը տեսաւ, որ հրապարա-
կի վրայ պառկած է մի երիտասարդ և շոքից հով-
հարում է:

— Այդ ինչ բանից ես այդպէս սաստիկ յոդնել,
հարցընց նրան Սոկրատէսը:

— Ի՞նչպէս չլոգնէի, գիւղից 10 վերստ ոտով եմ
եկել:

— Հօ ծանր բան չունէիր շալակիդ, հարցընց
Սոկրատէսը:

Երիտասարդը նեղացաւ:

— Այդ ինչ իմ բանն էր. զրա համար ստրուկ
կայ, նա էր բերում շալակելուն:

— Իսկ նա էլ յոգնեց թէ ոչ:

— Նրա պէտքն է, առողջ մարդ է, ամբողջ ճանապարհը երգելով էր գալիս և կարծես բեռը նա չէր շալակել:

— Ես ցաւում եմ քեզ վրայ, ասաց Սոկրատէսը. դուրս է գալիս որ քո ստրուկը կարող է ճառայել թէ քեզ, թէ ամեն մարդու և թէ իրան, իսկ դու չես կարող ծառայել ոչ ուրիշ մարդկանց և ոչ էլ մինչև անգամ քեզ:

Սոկրատէսը մի ուրիշ անգամ տեսաւ, որ մէկ պարոն մտրակով ծեծում է իր ստրուկին:

— Ինչո՞ւ ես դրան այդպէս սաստիկ ծեծում, հարցրեց նրան Սոկրատէսը:

— Ի՞նչպէս չծեծեմ, պատասխանեց պարոնը, շատակեր է, ծոյլ է և միշտ մտածում է քնելու, ուտելու և քէֆի մասին: Արան հարիւր մտրակն էլ քիչ է:

Սոկրատէսն այդ պարոնին մի կողմը քաշեց և ասաց.

— Իսկ դու միթէ փափուկ քնելու, քաղցր ուտելու և քէֆի մասին չես մտածում:

Պարոնը ոչինչ չպատասխանեց:

— Եթէ դու ինքդ էլ նոյն բաների մասին ես մտածում, ուրեմն քեզ քանի մտրակ պէտք է խփել այն բանի համար, ինչի համար որ դու դրան պատժում ես: Զէ որ նա քեզանից է օրինակ վերցնում:

Պարոնը նեղացաւ և հեռացաւ Սոկրատէսից:

V.

Ի՞նչՊէս Պէտք է ԱՊՐԵԼ ԳԵՐԴԱՍՏԱՆ ՄԷԶ.

Երբոր Սոկրատէսն սկսեց թողնել իր քարտաշութեան արհեստը և գնալ հրապարակ ժողովրդին սովորեցնելու, նրա կինը շատ վշտացաւ, որ իրանք շատ վնաս են կրելու: Բայց երբ տեսաւ, որ իր ամուսնու մօտ շատերն են հաւաքւում սովորելու համար՝ մըխիթարուեց և մտածեց. «Սովորելու համար լաւ կըվարձատրեն. ուսուցիչները լաւ են ապրում, մենք էլ չաւ կապրենք»:

Իսկ Սոկրատէսն այդպէս չէր մտածում. նա մըտածում էր: «Ես չեմ կարող սովորեցնելու համար փող առնել. ես սովորեցնում եմ այն, ինչ որ Աստծու ձախն ինձ թելադրում է. ես սովորեցնում եմ արդարութիւն. ինչպէս կարող եմ դրա համար վարձ ստանալ»:

Թէև շատ մարդ էր հաւաքւում Սոկրատէսին լսելու, բայց նա ոչ ոքից փող չէր առնում: Իսկ ընտանիքին պահում էր էլի իր արհեստով: Սոկրատէսի կնոջ համար խեղճ ապրելը՝ և ամօթ և ծանր էր թւում: Նա յաճախ տրտնջում էր, թէ ինչո՞ւ իր մարդը սովորեցնելու համար փող չէ վերցնում: Երբեմն լաց էր լինում, երբեմն էլ անիծում էր ու հայ-հոյում: Սոկրատէսի կին Քսանտիպան մի շատ զիւրագրդիու կինարմատ էր: Երբ բարկանում էր՝ սկսում էր իր մազերը պոկել, ձեռքն ընկած բանը դէս ու դէն էր շպրտում:

Նրա այդ վարձունքից տանջւում էին թէ ինքը Սոկրատէսը և թէ սրգիքը: Բայց Սոկրատէսը չէր բարկանում, այլ կամ լռում էր, կամ աշխատում էր համոզել նրան: Մի անգամ երբ կինը շատ հայուեց, բայց Սոկրատէսը ձայն չհանեց, կինը բարկութիւնից կրակ կտրած վեր առաւ ամանով լուացքի ջուրն ու ածեց մարդու վրայ:

— Հէնց այդպէս էլ պէտք է լինէր. այդքան որտառումն լինելուց յետոյ շատ բնական է որ անձրեւ գար, ամենայն հանդարտութեամբ ասաց Սոկրատէսն ու սկսեց վրան գլուխը մաքրել:

Ըստպէս էր անում ինքը Սոկրատէսը և այդպէս էլ սովորեցնում էր իր որդոցը: Մի անգամ մեծ որդին բարկացրեց մօրը: Սոկրատէսն ասաց.

— Ի՞նչ ես կարծում, այն մարդիկ, որոնք լաւութիւնը չեն լիշում, լմւ մարդիկ են:

— Ես կարծում եմ, պատասխանեց որդին, եթէ մարդիկ իրանց լաւութիւն անողին փոխազարձօրէն նոյնն անել չեն կամենում, ասել է այդ մարդիկն ամենաանպիտան մարդիկ են: Եւ ամենքն էլ այսպէս են մտածում:

— Գու շատ ուղիղ դատեցիր, ասաց Սոկրատէսը: Գէհ հիմա գու ինձ ասա. ինչ կասես, երբ տեսնես որ մէկ մարդ մի ուրիշին, որ ոյժ չունի, գըրկած մի տեղից տանում է մի ուրիշ տեղ, կերակրում է, հազցնում է, կարում է, քնացնում է, բարձրացնում է, հրւանդ ժամանակ ինամում է, նրա ստահակութիւններին ամենայն սիրով համբերում, ևայն և

այն: Ի՞նչ ես կարծում, դրանով այդ մարդը միւսին լաւութիւն արել է թէ ոչ:

— Այս, մեծ լաւութիւն է արել, ասաց որդին:

— Զէ որ այդ միւսովնը և դրանից էլ աւելին արել է քո մարդը քեզ համար: Նա քեզ գրկել էլ է, կերակրել էլ է, քեզ համար զիշելներով անքուն էլ է մնացել: Խոկ դու ինչ ես անում նրան. արդեօք չարդում ես նրան, ինչպէս հարկն է:

Օրդին շփոթուեց, բայց չէր ուզում կոտրուել և ակսեց արդարանալ.

— Ես կրյարգէի, եթէ նրա տեղն ուրիշը լինէր: Բայց մէկ էլ տեսնում ես անտեղի գոռում է, կամ առանց պատճառի մարդու վրշտացնում, այնպէս որ քիչ է մնում մարդու միրտ ճաքի:

— Խոկ երբ դու փոքր էիր, ասաց Սոկրատէսը, շատ տեղին էիր աղաղակում: Բայց չէ որ նա համբերում էր, սիրում էր քեզ և ինամում: Այդպէս և դու պէտք է անես:

VI.

Տէ 20^oկ Սոկրատէսը Պէտք ԶՈՒՆՔՐ ՈՇ ԹԱՆԿԱԳԻՆ ԿԵՐԱԿՐԻ, ՈՇ ԷԼ ԹԱՆԿԱԳԻՆ ՀԱԳՈՒՍՏԻ.

Մ ե անգամ Սոկրատէսի մօտ եկաւ մէկ ուսուցիչ, մտիկ տուեց նրա ապրուստին և ասաց.

— Ես այժմ հասկացայ, թէ դու ինչպէս ես

ապրում, Սոկրատէս. Կերակուրդ կոշտ է և հագուստք շատ հաօարակ ու անփոփիս՝ թէ ձմեռ և թէ դարուն, իսկ ուսնամաններ հօ բոլորվին չունիս: Էլ ինչիդ է հարկաւոր այդքան իմաստութիւնդ, եթէ այդ քո իմաստութիւնից կեանքդ պէտք է չարքաշութեան մէջ անցկացնես:

— Իսկ դու լսել ես, որ ես երբելիցէ գանգատած լինիմ այդ մասին, հարցըց Սոկրատէսը:

— Ոչ, չեմ լսել. իրաւ է դու չես գանգատուում, բայց քո կեանքը լաւ կեանք չէ. դու ոչ համեղ կերակուրներ ունիս, ոչ խմիչքներ և ոչ էլ զիտես, թէ ինչ է զուարձութիւն:

— Ոչ, ասաց Սոկրատէսը, այնպէս ախորժակով ոչ ոք ուտում է և ոչ էլ խմում ինչպէս ես. թէ ինչու, պատճառն իսկոյն քեզ կասեմ: Դու ինքդ էլ զիտես, որ յոգնած ժամանակ ամենահասարակ կերակուրն էլ համեղ է թուում: Եւ ես հէնց այդպէս եմ անում, ուտում եմ այն ժամանակ, երբ քաղցած եմ լինում. և խմում եմ միայն այն ժամանակ, երբ ծարաւ եմ լինում. ուրեմն ինձ էլ ինչ հարկաւոր են թանկագին կերակուրներ ու խմիչքներ: Ինձ համար ամենահասարակ կերակուրն աւելի համեղ է, քան թէ թանկագինը: Հագուստիս համար էլ այս կատեմ քեզ, որ սրանից աւելի չունիս և չեմ էլ ուզում: Դու զիտես, որ մարդ ունենում է երկու հագուստ՝ մէկը ձմռան, միւսն ամառաւան, որովհետև ամառը ձմռան հագուստով շոք է լինում, իսկ ձմեռն ամառաւանով՝ ցուրտ: Բայց ես այնպէս եմ վարժե-

ցրել իմ մարմինը, որ ձմեռ ժամանակ այս հագուստով չեմ մրառմ և ամառն էլ չեմ շոքում: Ճոքին էլ, ցրտին էլ՝ ուր ուզես կրգնամ: Ուրեմն էլ ինչիս պէտք է ինձ ուրիշ հագուստ:

— Ասենք դու այդպէս վարժուել ես, ասաց ուսուցիչը, բայց ուրիշ մարդիկ էլ հօ քեզ պէս չեն ապրելու:

Սոկրատէսն ասում է նրան.

— Խիբր. ասենք՝ ինձ մօտ էլ դայ մի չունեոր մարդ, քեզ մօտ էլ, և օգնութիւն խնդրէ: Ո՞րս աւելի հեշտ կօգնենք, գո՞ւ թէ ես: Դու կըմտածես. «Լաւ կըլինէր, թէ կարողանայի սրան օգնել, բայց ես էլ շատ կարիք ունիմ. եթէ սրան տամ, ինձ պիտի զրկեմ. եթէ աշխատանքի մէջ սրան օգնեմ, ժամանակս ավսոս է»: Բայց ես այդպէս չեմ մտածիլ: Ես միշտ պատրաստ եմ ուրիշին օգնելու, որովհետև ես քչով բաւականանում եմ: Ժամանակս էլ չեմ ափսում, որովհետև ես ոովրեցնում եմ ձրի:

— Այո՛, այդպէս է, ասաց ուսուցիչը:

— Կամ մի ուրիշ բան ասեմ, ասաց Սոկրատէսը. ասենք ժողովրդի նեղ ժամանակն է և նրան հարկաւոր է ծառայել, դու կաշխատես, որ քեզ ըընտրեն և չխանգարեն սեպհական գործերիդ, որովհետև դու այն ժամանակ վնաս կանես, այն ինչ ես ուրախութիւնով կրգնամ ծառայելու:

— Աշմարիտ ես ասում, ասաց ուսուցիչը, բայց ես լաւ եմ համարում մեռնել, քան թէ քեզ պէս ապրել: Զարմանում եմ, թէ որքան շատերն են լսում քեզ:

— Հսում են շատերը, բայց կատարում են քչերը, ասաց Սոկրատէսը. ոմանք լսում են լսում ու էլի իրանցն են անում: Բայց կան և այնպիսիները, ոռոնք իմ խորհրդի համաձայն են ապրում, չեն գանգատում և ասում են, որ այժմ աւելի բախտաւոր են, քան թէ առաջ: Մենք ձեր կեանքի բախտաւորութիւնը գիտենք, որովհետև այն թողել ենք և այս ընտրել, իսկ դուք մերը չգիտէք, որովհետև չէք փորձել:

Սոկրատէսի մօտից հեռացաւ ուսուցիչը և սկսեց ինքն իրան մտմտալ. «Հիմա ես ինչ մտածեմ Սոկրատէսի մասին: Ջատերը նրան խելառ են անուանում, գատապարտում են նրան, ծիծաղում են նրա վրայ. իսկ ես կարծում եմ, որ ընդհակառակն՝ նա շատ լաւ և արդար մարդ է»:

VII.

ԵՂԲԱՑՐԱԿՈՆ ԿԵԱՆՔԻ ՄԱՍԻՆ.

Սոկրատէսը մի անդամ լսեց, որ մի հարուստ վաճառական իր հարազատ եղբօրից բաժանուել է: Նա պատահելով այդ վաճառականին, ասում է նրան.

— Զարմանում եմ քեզ վրայ. դու խելօք, տընտես մարդ ես, ուզում ես աւելի հարատանալ, գործակատարներ ես վարձում, իսկ քո հարազատ եղբօրից բաժանում ես: Միթէ եղբօր հետ քաղցր ապրելը վատ է:

— Եղբօր հետ ապրելը լաւ է, բայց ինչպիսի եղբօր հետ: Իմ եղբայրս ուրիշների հետ լաւ է, իսկ ինձ հետ վատ:

— Կարելի է դու ինքդ ես վատ վարւում նրա հետ, հարցրեց Սոկրատէսը:

— Ես լաւ կըլինիմ այն մարդու հետ, ով ինձ հետ լաւ է, և բարութիւն կանեմ նրան, ով ինձ հետ բարի է,— իսկ բարութիւն անել նրան, ով որ թէ խօսքով և թէ գործով աշխատում է ինձ վատութիւն անել, ես չեմ կարող և ցանկութիւն ևս չունիմ, ցաւած սրտով պատասխանեց վաճառականը:

— Ասա ինձ, ինդքեմ, դու ինչպէս կրվարուէիր այն մարդու հետ, ում հետ կըկամենալիր բարեկամանալ, հարցրեց Սոկրատէսը:

— Այնպէս կրվարուէի, ինչպէս ուրիշները, այսինքն կաշխատէի նրան գիւր գալ իմ գործերով, կըկրաւիրէի ինձ մօտ, կըկրասիրէի, ամեն գործի մէջ կօգնէի և եթէ փողի հարկաւորութիւն ունենար, կըտալի:

— Այդ միևնոյնը դու հիմա արա քո եղբօր համար և կըտեսնես, որ նա կրփօխուվ գէպի քեզ:

— Ասենք՝ լսեմ քեզ և հանդիպելիս էլ բարեկեմ. բայց եթէ նա երեսը շուռ տալ, յետոյ մարդիկ ինչ կասեն. չէ՞ որ ես ամօթով կըմնամ:

— Լաւ վարուելը երբէք ամօթ չէ, ասաց Սոկրատէսը, և լաւ մարդիկ չեն ծիծաղիլ: Իսկ եթէ այն ժամանակ էլ եղբայրդ միևնոյնը մնայ, կընշանակէ նա է մեղաւորը, որովհետև ինչ-որ պէտք է՝ դու կա-

տարած կըլինիս: Սակայն չեմ կարծում, որ քո ասածի պէս լինի. հապա մէկ փորձիր, ասաց Սոկրատէսը: Ես գիտեմ, թէ ինչպէս եղբայրդ գիտէ բարեկամաբար ապրել ուրիշների հետ: Սկսեցէք եղբայրական նոր կեանք և բախտաւոր կըլինիք, որովհետեւ դուք այնպէս կապրէք, ինչպէս որ Աստուած է հրամայել:

—Երկու եղբայրը, շարունակեց իր խօսքը Սոկրատէսը, նոյն է թէ մարդու երկու աչքը, երկու ձեռքը և երկու ոտքը: Աստուածանից սահմանուած է, որ մի ձեռքը միւսին օգնէ, այնպէս էլ պէտք է եղբայրը եղբօրն օգնէ: Ի՞նչ կըլինէր, եթէ մի ձեռքը սկսէր միւսին խանգարել: Խոկ գու զիտես, որ ձեռները ոչ թէ իրար խանգարում են, այլ օգնում են միմեանց. և ձեռքերը դրա համար են, որից երկուսն էլ օգուտ ունին: Խոկ եղբայրը եղբօրն աւելի պիտի օգնէ, քան թէ ձեռքը ձեռքին, աչքը աչքին և ոտքը ոտքին: Ձեռներն ու ոտները միմեանց օգնում են մի արշին հեռաւորութեան վըրայ, խոկ եղբայրը եղբօրն օգնում է թէկուզ աշխարհիս միւս ծայրումն էլ գտանուի: Երկու աչքը միայն մի կէտի վրայ կարող են նայել, խոկ եղբայրն աւելի օգտակար է եղբօրը, որովհետեւ մէկ եղբօր չտեսած տեղը՝ միւսը կարող է տեսնել: Աստուած հրամայել է եղբայրաբար ապրել բոլոր մարդկանց հետ. խոկ ով որ իր հարազատ եղբօր հետ այդպէս չէ վարւում, նա չէ կատարում Աստծու կամքը:

VIII.

ՄԱՐԴԻԿ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԱՊՐԵՆ ՄԻԱՍԻՆ.

Սոկրատէսին լսելու էին գալիս ոչ միայն Աթէնքի բնակիչներից, այլև ուրիշ քաղաքներից ու երկիրներից: Սոկրատէսի մատ գալիս էին լսելու կամ նրա տանը և կամ սպասում էին, որ նա հրապարակ գուրս դայ:

Մի անգամ Սոկրատէսի մօտ սովորականից շատ ժողովուրդ հաւաքուեց՝ թէ ծեր, թէ երիտասարդ, թէ համաքաղաքացիք և թէ օտար երկրացիք: Սոկրատէսը չէր սիրում, որ մենակ ինքը երկար խօսի, այլ միշտ հարցեր էր առաջարկում ուրիշներին: Եւ նա միշտ ասում էր, թէ ինչպէս իր մալրն օգնում է ուրիշներին ծնելու, այնպէս էլ ինքը ոչինչ չէ սովորեցնում, այլ օգնում է ուրիշներին ինքն իրանց սովորելու: Սոկրատէսն այդպէս վարուեց և այս անզամին. նա նստեց աթոռի վրայ, խոկ ժողովուրդը շրջապատեց նրան: Սոկրատէսը ձեռները դրեց ծնկների վրայ, դլուխը քաշ գցեց և սկսեց մտածել: Բոլորն սպասում էին, թէ ինչ կըհարցնի: Սոկրատէսը գլուխը բարձրացրեց և ասաց:

— Ասացէք ինձ մի տեսնեմ. ինչու մարդիկ միասին են ապրում և ոչ ջոկ-ջոկ: Ինչպէս տեսնում էք, այժմ մարդկանց մէջ թշնամութիւն և անհամութիւն կայ, եթէ նրանք առանձին-առանձին ապրէին՝ գուցէ աւելի լաւ լինէր:

Ամենքն սկսեցին խօսել: Մէկն ասաց.—Մարդիկ միասին ապրում են նրա համար, որ ձեռընտու է. մենակ մարդու համար աշխատելն էլ դժուար է: Միասին աւելի շատ բան կարելի է շինել:

Միւսն էլ ասաց.—Մենակ ապրելը երկվաղալի է, պաշտպանուելն էլ դժուար:

Երրորդն էլ թէ՝—Մարդ մենակ որ ապրէր, տը-խուր կըլինէր, իսկ մարդկանց հետ ուրախ է:

Չորրորդն էլ ասաց.—Հէնց Աստուած էլ նշանակել է մարդուն մենակ չափրել, այլ մարդկանց հետ:

—Ճշմարիտ է, ասաց Սոկրատէսը: Բայց ինչպէս է լաւ, որ մարդիկ ապրեն՝ խաղաղ թէ թշնամաբար:

—Իհարկէ խաղաղ, պատասխանեցին ամենքը:

—Դուք այդպէս էք կարծում, Աստուած էլ այդպէս է պատւիրել, բայց գործն ուրիշ է ցոյց տալիս: Ինչո՞ւ:

Բոլորն էլ լրեցին և զգիտէին ինչ պատասխանեն: Սոկրատէսը դարձեալ սկսեց խօսել.

—Ես ինքս էլ զգիտեմ, բայց մտածենք, գուցէ միասին զլխի ընկնենք: Կի հարցեր տամ ձեզ և գուք պատասխանեցէք: Դեռ առաջ ասացէք. մարդ ո՞րից աւելի օգուտ ունի՝ վարձկան-ստրուկից, թէ բարեկամ-ընկերից:

—Յալտնի բան է, բարեկամ-ընկերից, պատասխանեցին ամենքը:

—Վարձկան-ստրուկը մտածում է իր օգուտի մասին և ոչ թէ տիրոջ օգուտի, ասաց մէկը. իսկ բարե-

կամ-ընկերը քո մասին կըհոգայ, ինչպէս իրա մասին:

—Վարձկան-ստրուկը կըմնայ մօտդ, քանի դեռ փող ունիս, կամ մինչև իր ծառայութեան ժամանակի լրանալը, իսկ յետոյ կըթողնէ քեզ և դու կըմնաս մենակ, ասաց միւսը:

—Իսկ բարեկամ-ընկերը նրանով է բարձր, ասաց երրորդը, որ անբախտութեանդ ժամանակ քեզ չի թողնիլ. նա իր ունեցած վերջին կոպէկն անգամ քեզ հետ կըբաժանէ:

—Լաւ ընկերոջ հետ մարդ ինքն էլ կըլաւանալ, ասաց չորրորդը:

—Ինչպէս տեսնում եմ՝ դուք բոլորդ էլ համաձայն էք, ասաց Սոկրատէսը, որ բարեկամը բարձր է վարձկան-ստրուկից, և ով որ շատ բարեկամ ունի, նա աւելի հարուստ է, ուժեղ է, ուրախ է և հանգիստ, քան թէ նա՝ ով որ շատ ստրուկներ ունի: Ուրեմն դուք աւելի նշանակութիւն էք տալիս բարեկամներին: Երեկի դուք ամենքդ էլ աւելի բարեկամներ ունիք, քան թէ ստրուկներ:

—Պէտք է որ այդպէս լինի, բայց այդպէս չէ, ասաց մէկը:

—Եթէ հարցնես, ասաց միւսը, թէ մեզանից ամեն մէկը ո՞րքան թշնամի ունի, մենք իսկոյն քեզ կասենք. ստրուկ ու վարձկաններ ևս բաւական ունինք. իսկ եթէ մեզանից մէկը մի-երկու հաւատարիմ բարեկամ-ընկեր ունենալ, այդ էլ մեծ բան է:

—Ինչո՞ւ այդպէս, հարցըեց Սոկրատէսը. դուք ինքներդ էք ասում, որ բարեկամ-ընկերն ամենաառա-

ջին բանն է, և բարեկամներ չէք ճարում: Եթէ մենք գիտենք, թէ մեզ եզներ են հարկաւոր, մենք դըրանց ճարում ենք. դուք ինչու բարեկամներ չէք ճարում, եթէ գիտէք, որ նրանք ձեզ օգուտ են, անբախտութեան ժամանակ մեծ յոյս են:

—Նրա համար որ, ասաց մէկը, լաւ եզներ շատ կան, իսկ լաւ մարդիկ քիչ: Երբ արօրի համար եզն է հարկաւոր, ջոկում ես լաւը և առնում: Իսկ երբ բարեկամ հարկաւորուի, որտեղ գտնես: Մարդիկ շատ կան, բայց լաւերը քիչ են:

—Այդ ճշմարիտ է, ասաց Սոկրատէսը. իսկ դու ո՞ր եղն ես համարում արօրի համար լաւ:

—Այնպիսին, որը հերկում է, ուժեղ է և հանգիստ:

—Իսկ ո՞ր մարդուն դու բարեկամ կընտրես, ասաց Սոկրատէսը:

—Այն մարդուն, որ ոչ-միայն իր մասին է մտածում, այլև ուրիշին, նրան՝ որ եթէ լսէ, թէ բարեկամը հիւանդացել է, կըդնայ կիմանայ, արդեօք նրան ինչ է պէտք և եթէ հարկաւոր լինի, վերահասու կըլինի գործերին, որ հիւանդութեան պատճառով նա վնաս ըկրէ. եթէ փող լինի հարկաւոր, կըտայ: Ահա այդպիսի մարդուն ես կասեմ լաւ բարեկամ:

—Բայց դու ինչպէս իմանաս, թէ այս ինչ մարդը քո ասածի նման է թէ ոչ:

—Նրա բարի գործերից կիմանամ:

—Իսկ նա քեզ ինչպէս ճանաչէ, հարցըց Սոկրատէսը:

—Երկի միւնոյն կերպով:

—Իսկ դու երբ կըդառնաս բարեկամ, հարցըց Սոկրատէսը, երբ ինքդ կարիք ունենաս, թէ երբ որ նա ունենայ:

Ամենքն էլ լոեցին և զգիտէին ինչ պատասխանեն:

—Այդ ինչ է, որ զգիտէք, ասաց Սոկրատէսը:

Ասենք քեզ մօտ եկաւ մի նոր հարեան. ոչ դու ես նրան ճանաչում և ոչ էլ նա քեզ: Դու ինչպէս պէտք է իմանաս՝ նա լաւ բարեկամ կըդառնայ թէ ոչ: Դու պէտք է սպասես, որ նա քեզ օգնի, թէ նախ դու նրան կօգնես:

—Ես կարծում եմ, լաւ կըլինի, եթէ սպասենք տեսնենք նա ինչ կանի, ասաց մէկը:

—Նա էլ կըսպասէ, թէ դու ինչ ես անելու. այդպիսով դուք երբէք չէք կարող բարեկամանալ, պատասխանեց Սոկրատէսը:

—Դու ճշմարիտ ես ասում, Սոկրատէս, ասաց միւսը:

—Մենք բոլորս էլ ուզում ենք, որ մարդիկ մեզ բարիք անեն, իսկ ինքներս չենք ուզում սկսել, ասաց երրորդը:

—Դրա համար էլ ասում ենք, որ լաւ եզներ շատ կան, իսկ մարդիկ՝ քիչ: Բայց նրանք ինչպէս լաւ լինին, քանի որ մենք ինքներս չենք ուզում լաւ լինել և դրա համար մեղաղբում ենք ուրիշներին, ասաց չորրորդը:

—Ամենքս էլ պնդում ենք, ասաց Սոկրատէսը, որ լաւ է մարդիկ միասին ապրեն սիրով, քան թէ

թշնամաբար Ասում էք, որ մարդկանց համար բարեկամութիւնը թանգ արժէ և բարեկամութիւնը կայանում է նրանում, որ մարդկանց լաւութիւն անենք: Իսկ ինքներս լաւութիւն անել չենք կամենում, այլ ուզում ենք, որ ուրիշները մեղ լաւութիւն անեն: Դրա համար է, որ մենք չենք կարող միասին խաղաղ և ուրախ ապրել; այլ իրար թշնամանում ենք ու վշտացնում միմեանց:

IX.

ԱՄԵՆ ՄԱՐԴ ԷԼ, ԽճՉ ՊԵՏՔ Է ԳԻՏԵՆԱՅ.

Մի անգամ Սոկրատէսն աշխատանքից վերադառնալիս տեսաւ շատ ժողովուրդ է հաւաքուած և շատ էլ ծանօթ մարդիկ: Թօտեցաւ նրանց և բարեւեց: — Մենք վաղուց է քեզ ենք սպասում այսուել, ասաց նրան ժողովուրդը. նստիր, մենք ուզում ենք քեզ հետ խօսել:

Սոկրատէսը դեռ չէր նստել, որ մարդիկ շրջապատեցին նրան. ով որ այդտեղից անց էր կենում կանգ էր առնում, իսկ ում որ փողոցում ասում էին, թէ Սոկրատէսը պատի տակ նստած սովորեցնում է, նա ևս գնում էր այնտեղ: Բանւորները ժողնում էին իրանց գործը և գնում այնտեղ, որտեղ սովորեցնում էր Սոկրատէսը:

Չորս մարդ սկսեցին հարցնել Սոկրատէսին, թէ իրանց որդոցն ինչ սովորեցնեն:

— Խորհուրդ տուր, Սոկրատէս, թէ ինչ սովորեցնենք մեր որդոցը, որ լաւ մարդ դառնան. նրանք արդէն մեծացել են:

— Դուք ինչ էք ուզում նրանց սովորեցնել, հարցըց Սոկրատէսը:

— Ես մտադիր եմ որդուս գարբնութիւն սովորեցնել, ասաց մէկը:

— Իսկ ես իմիս ուզում եմ քարտաշութեան տալ: Դու ևս, Սոկրատէս, այդ արհեստով ես պարապում:

— Իսկ ես ամբողջ կեանքիս մէջ հող եմ մշակել, ուզում եմ, որ որդիս էլ ինձ հետ աշխատի:

— Իմ որդին ուսման մէջ ընդունակ է. նա ցանկանում է բժշկութիւն սովորել:

— Այդ ամենը լաւ, ասաց Սոկրատէսը: Ամեն մարդ այսպիս թէ այնպէս ուրիշի օգտին պէտք է աշխատի. այնպէս չէ: Եթէ որ բոլորն արհեստաւոր դառնան, արդեօք ամեն բան կարգին կըլինի: Եթէ հարկաւոր լինի տուն կամ տաճար շինել, կըդիմենք քարտաշին կամ հիւսնին. երբ հարկաւոր լինի նոր նաւեր շինել, կըդիմենք դարձեալ հիւսնին. իսկ եթէ մարդ ստիպուած լինի վատ կնոջ հետ ապրել, որդին՝ ժլատ հօր հետ, եղրայրը՝ բարկացիոտ եղրօր հետ, հարկաւոր՝ չար հարկաւնի հետ, հիւրընկալը՝ հպարտ հիւրի հետ, ինչ վարպետ կանչենք:

— Դրա համար վարպետ չկայ. դրա համար հարկաւոր է արդար մարդ լինել, ասաց մէկը:

— Դրա համար հարկաւոր են թէ քարտաշներ, թէ հիւսներ և թէ բժիշկներ, ասաց միւսը:

— Այդ գործն ամեն լաւ մարդ պէտք է հասկանայ, ասաց երրորդը:

— Ուրեմն քո ասելով, ասաց չորրորդը, բացի արհեստից ամեն մարդ պէտք է իմանայ, թէ ուրիշ մարդկանց հետ ինչպէս պէտք է ապրել:

— Նշանակում է, ասաց Սոկրատէսը, ամեն մարդ բացի իր արհեստից էլի մի բան կայ, որ պէտք է իմանայ:

— Այդ բանն ամեն մարդ մի տեսակ է հասկանում, ասաց մէկը:

— Այդ բանը չէ կարելի իբրև արհեստ սովորել, ասաց միւսը:

— Բայց ինչպէս սովորել այդ, ասաց երրորդը:

— Այդ բանը չի կարելի սովորել, ասաց չորրորդը:

— Զարմանալի բան, ասաց Սոկրատէսը, հէնց այն բանը, ինչ-որ ամենահարկաւորն է, չի կարելի սովորել... Խնդրեմ ասես, ինչն է քեզ համար առելի թանգ՝ կնոջդ հետ լաւ ապրելը, թէ լաւ ոտնամաններ ունենալը:

— Ես պատրաստ եմ ամբողջ կեանքիս մէջ բոբիկ ման գալ, միայն թէ կնոջս հետ միշտ սիրով ապրէի:

— Ի՞նչն է վատ՝ հօր հետ կռւով ապրելը, թէ լաւ հագնուելը:

— Յայտնի բան է առելի լաւ է կռիւ զինի, քան թէ լաւ հագնուեմ:

— Իսկ ո՞ր հիւանդութիւնն է վատ՝ դողը, թէ այն, որ քեզ ոչ մի մարդ չի սիրում:

— Եւ ամենավատ հիւանդութիւնը ամենքից ըստիրուած լինելն է:

— Ուրեմն բանից դուրս է գալիս, որ այն զործը, որը ամեն մարդ պարտական է գիտենալ, բարձր է թէ կօշկակարութիւնից, թէ դերձակութիւնից թէ բժշկութիւնից, որովհետև այդ բոլորը կարելի է սովորել, իսկ այն՝ չի կարելի սովորել: Մարդ կարող է երկնքի աստղերը հաշւել, բոլոր խոտերը ճանաչել: Բայց թէ մարդկանց հետ ինչպէս պէտք է ապրել, այդ չի կարող իմանալ: Այնպէս չէ:

— Այս. ինչպէս երեսում է մի բան կայ, պատասխանեցին Սոկրատէսին:

— Ես ևս կարծում եմ, պատասխանեց Սոկրատը: Մեզանից առաջ էլ մարդկի էին ապրում, արգեծք նրանք այդ մասին ոչինչ չեն ասել: Այս, վերցնենք այս տաճարի արձանագիրը. այնտեղ ինչ է գրուած: Այդ գրուածքը կին ժամանակաւ գրուածք է: Մրգեօք նոյն բանի մասին չէ գրուած, ինչ բանի մասին որ մենք խօսում ենք, այսինքն՝ թէ մարդ ինչպէս պէտք է ապրի ուրիշների հետ:

— Այնտեղ գրուած է. «Ճանաչիր ինքդ քեզ», և ոչ թէ ինչպէս պէտք է ապրել մարդկանց հետ, պատասխանեցին Սոկրատէսին:

— Կարելի է հէնց այդ խօսքերը՝ «Ճանաչիր ինքդ քեզ», ցոյց են տալիս, թէ մենք եթէ ճանաչենք մեզ՝ կիմանանք թէ ուրիշների հետ ինչպէս պէտք է ապրել:

— Սոկրատէս, բացատիր մեղ այդ բանը, ասաց
մէկը:

— Դուք գիտէք, ասաց Սոկրատէսը, որ ես բա-
ցատրել չգիտեմ, ես կարող եմ միայն հարցնել, իսկ
դուք պարզաբանեցէք: Ահա եզները, տեսէք, խա-
ղող են տառում: Հիմա ասացէք ինձ, ով կարող է
ճանաչել եզներին և ով խաղողը: Նա, որ ուտում է
եզան միս և խաղող, թէ՞ նա, որ գիտէ եզների և
խաղողի առաջացնելը:

— Ի հարկէ նա, ով որ գիտէ առաջացնել:

— Լաւ. որպէսզի թէ անասուն և թէ խաղող
լաւ առաջանան, ինչ պէտք է գիտենալ:

— Պէտք է գիտենալ իր ժամանակին կերակրել,
իր ժամանակին փորել, կապել:

— Իսկ այդ գործի համար պէտք է գիտենալ,
թէ ինչ է հարկաւոր անասունին և ինչ խաղողի
վազի համար: Այնպէս չէ: Միւլնոյնը, կարծեմ, մեղ
համար էլ է: Մենք ճանաչում ենք մեզ, երբ գի-
տենք, թէ մեղ ինչ է հարկաւոր: Արդեօք մենք գի-
տենք, թէ մեզ ինչ է հարկաւոր:

— Իհարկէ, մենք ամենքս գիտենք, թէ մեզ
ինչ է հարկաւոր, ասաց մէկը:

— Եւ մարդ չկայ, որ չգիտենայ, թէ իրան ինչ
է հարկաւոր:

— Քեզ համար ինչ է հարկաւոր, հարցրեց Սոկ-
րատէսը:

— Ինձ շատ բան է հարկաւոր, բայց ամենից
շատ հարստութիւն:

— Եթէ ինձ հարցնէր Սոկրատէսը, ասաց միւ-
ռը, ես ոչ թէ հարստութիւն կուզէի, այլ մարդ-
կանց վրայ եշխել: Եթէ ես իշխանութիւն ունենամ,
հարստութիւն էլ կունենամ:

— Իսկ ինձ, ասաց երրորդը, ոչ հարստութիւն
է պէտք, ոչ իշխանութիւն, այլ ես կուզէի ունե-
նալ չափաւոր ապրուստ, որով անկարիք ապրէի և
կարող լինէի գիտութիւնով պարապել, այնպէս որ
ոչ ոք ինձ չխանգարէր:

— Իսկ ես, ասաց չորրորդը, կուզէի յայտնի
մարդ դառնալ, որպէսզի ամենքն ինձ պատւէին:

— Զարմանալի է, ասաց Սոկրատէսը, երբ հարց-
րի թէ ինչ է հարկաւոր, որ եզզ կուշտ լինի և խա-
ղողը լաւ, բոլորդ մի բան ասացիք: Բայց երբ հարց-
րի, թէ մարդուն ինչ է հարկաւոր, ամեն մէկդ ջոկ-
ջոկ բան ասացիք: Տեսնում էք, որ մենք չենք ճա-
նաչում մեզ, որովհետեւ իրան ճանաչել, կընշան-
էլ իմանալ, թէ ինչ է հարկաւոր մարդուն, այն-
պէս որ ամենքը համաձայն լինին: Դու ասում ես
քեզ հարստութիւն է հարկաւոր, ասաց Սոկրատէսը:
Լաւ, մենք բոլորս համաձայն ենք քեզ հետ: Մենք
էլ ուզում ենք հարստութիւն: Ի՞նչպէս բաժանենք
այդ հարստութիւնը: Կըհամաձայնես, եթէ հաւա-
սար բաժանենք մեր մէջ:

— Ո՛չ, ասաց առաջինը. այն ժամանակ էլ ինչ
հարստութիւն կըլինի:

— Նշանակում է մենք չենք կարող քեզ հետ
համաձայնել, ասաց Սոկրատէսը: Գուցէ իշխանու-

թեան մասին համաձայնենք: Եթէ դու իշխանութիւն ես ուզում, ես էլ եմ ուզում. ուրեմն մենք էլ ինչպէս իշխենք միմեանց վրայ:

— Անկարելի է, ասաց միւսը և ծիծաղեց:

— Նշանակում է քեզ հետ ևս չի կարելի համաձայնել: Հիմա տեսնենք քեզ հետ ինչպէս կրկամաճայնենք, ասաց Սոկրատէսը դիմելով երրորդին: Դու ասում ես, որ ուզում ես չափաւոր ապրուստ և գիտութիւնով պարապել, որովհետև սիրում ես գիտութիւնը: Իսկ ես ուզում եմ սրինդ ածել: Ես այդ եմ սիրում: Ուզում եմ ուտել, խմել և քէֆս ուզած ժամանակ սրինդ ածել և լսել լաւ ածողներին, այնպէս որ ոչ ոք ինձ չխանգարէր: Բայց եթէ ես քո բնակարանին կից ապրելս լինիմ, ինչպէս անեմ, որ քեզ չխանգարեմ և դու ինչպէս անես, որ քո բարձր կարդալովդ ինձ չխանգարես: Ասենք՝ ես քեզանից բաժանուեմ, յետոյ երկուսիս ով կերակրի: Դու ինձ համար չես պատրաստի, որովհետև սիրում ես գիտութիւնով պարապել, իսկ ես քեզ համար չեմ պատրաստի, որովհետև սրինդ ածել եմ սիրում: Կարելի է դու ասես՝ ըստուկներին կրկամայնք, թող նրանք մեզ համար պատրաստեն: Բայց եթէ ստրուկներն էլ ուզենան սրինդ ածել և երկնքի ասուկերը համարել: Այս ժամանակ ինչպէս անենք: Ուրեմն քո ասածն էլ չեղաւ: Այն, ինչ որ քեզ է հարկաւոր՝ ամենքին պէտք չէ: Եւ դրանով մենք դեռ մարդուն չճանաչեցինք:

— Իսկ իմ ասածի համար ինչ ես ասում, Սոկրատէս, հարցրեց չորրորդը:

— Դու լաւ ես ասում, ասաց Սոկրատէսը: Քո ասածն աւելի խելքի մօտիկ բան է: Դու ուզում ես, որ քեզ ամենքը յարգեն միայն: Այդ շատ ուղիղ է և այդ ամեն մարդու ևս հարկաւոր է: Դու ուզում ես, որ ես քեզ յարգեմ, ես էլ ուզում եմ, որ դու ինձ յարգես: Այդպէս և ուրիշներն են ուզում: Բայց ինչ կարող ես անել, որ մարդիկ յարգէին քեզ:

— Հէնց այդ է դժուարը, ասաց մէկը:

— Այն, այդ դժուարը բան է, ասաց Սոկրատէսը, բայց խնդիրը հէնց դրա մէջն է: Զեր բոլորի ասածից այն է դուրս գալիս, որ մարդիկ մեզ բարիք անեն և չխանգարեն մեզ բախտաւոր ապրելու: Այնպէս չէ:

— Այն, միաբերան հաստատեցին ամենքը:

— Դու ասացիր, որ հարստութիւն ես ուզում: Դու էլ թէ՝ իշխանութիւն: Դու ասացիր—ուզում ես ազատօրէն գիտութիւնով պարապել: Իսկ դու ցանկացար յարգանք: Դուք ամենքդ ուզում էք, որ մարդիկ ձեզ չխանգարեն լաւ ապրելու, լաւութիւն անեն ձեզ, ևայն ևայն: Այդ միենոյնը հարկաւոր է և ուրիշների համար: Նշանակում է ձեզ համար եղած լաւութիւնը չպիտի խանգարէ ուրիշների համար լինելիք լաւութեանը: Մենք խօսեցինք եղների և խաղողի մասին: Եթէ դու ասում ես՝ եղանը ջուր է պէտք, դու հօ դրանով չես ասում, որ նա պէտք է աղբիւրը կոխկրւտէ և ուրիշները պղտոր ջուր խմեն. հօ չես ասում, որ նա պէտք է բոլոր խոտը ոտի տակ տայ փչացնի, այնպէս որ միւսները բոլորովին ցեխոտուած

խոտ ուտեն: Եթէ դու ասում ես, որ խաղողի վազի համար հարկաւոր է ընդարձակ տեղ և շուրջը փորուած, դու հօ դրանով չես ասում, որ բոլոր հարեւանների որթերը կտրտենք: ՄիԱնոյնը կարելի է ասել և մարդկանց համար: Եթէ մենք ճանաչենք մարդուն և իմանանք, թէ ինչ է հարկաւոր նրան՝ մենք կիմանանք, թէ ինչ է անենք նրան: Զպէտք է անել այն, ինչ-որ կարող է խանգարել և վնասել ուրիշներին: Այնպէս չէ:

Ամենքը համաձայնեցան:

— Նոյն կերպ մենք կիմանանք, թէ մարդուն ինչ է պէտք: Մենք բոլորս ուզում ենք, որ մեզ բարութիւն անեն,— իսկ մեզ բարութիւն ով է անում:

— Մարդիկ, պատասխանեցին նրանք Սոկրատէսին:

— Իսկ մենք ինչ ենք:

— Նոյնպէս մարդիկ: Ուրեմն մեզ ինչ է հարկաւոր անել:

— Մարդկանց բարութիւն: Ուրեմն մենք որոշեցինք, ասաց Սոկրատէսը: Մենք մեզ հարցրինք. թէ ինչ ենք մենք: Եւ վճռեցինք, որպէսզի այդ իմանանք, պէտք է զիտնանք, թէ ինչ է պէտք մեզ: Եւ ամենից առաջ մենք վճռեցինք բոլորիդ համաձայնութիւնով, որ մարդիկ մեզ չխանգարեն ապրելու, իսկ յետոյ—որ մեզ բարութիւն անեն: Բայց որպէսզի մարդիկ միմեանց բարութիւն անեն, պէտք է որ մենք էլ ուրիշներին բարութիւն անենք: Ահա

այդ է զիտութեան սկիզբը, որ ամեն մարդ էլ պէտք է իմանալ:

— Այո, այդպէս է,— ասաց մէկը. բայց միշտ չի կարելի իմանալ, թէ ինչով կարող ես խանգարել ուրիշին և որ գործը բարի է և որը չար:

— Դու ճշմարիտ ես ասում, ասաց Սոկրատէսը. դրանում մենք յաճախ սխալում ենք, բայց չէ որ դարբնի, կօշկակարի աշակերտներն էլ յաճախ սխալում են, երբ դեռ նոր են սովորում. բայց իրանց վարպետները սովորեցնում են նրանց այն, ինչ-որ իրանք սովորել են իրանց վարպետներից: Ես ինքս ահա սովորում եմ այդ գործը, որը ամեն մարդ պարտական է զիտնալ, և սովորեցնում եմ ուրիշներին այնպէս, ինչպէս ինձ սովորեցրել են իմ ուսուցիչները և Աստծու ձայնը, որը ես լսում եմ իմ հոգու մէջ: Այդ ձայնը խղճի ձայնն է, որին ամեն մարդ էլ կարող է լսել իր մէջ՝ եթէ միայն նա ուզենալ լսել: Եւ եթէ լսի կըսովորի և ուսուցիչներից և այդ ձայնից: Ամենազիմաւոր գործի մէջ անդամ մարդիկ առանց առաջնորդի չեն մնում. և մարդկանց ստեղծուելու օրից սկսած նրանք սովորում են, թէ ինչպէս ապրել միասին և նրանցից ամեն մէկի մէջ միւնոյն ձայնն է խօսում և միւնոյն բանը սովորեցնում: Ամեն բան զիտենալը լաւ բան է, բայց ամենակարեւորն այն է, որ մարդիկ սովորեն ապրել առանց ուրիշին խանգարելու և միշտ էլ բարի գործեն:

X.

ՍՊԿՐԱԾԷՄԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԵԼ.

Սոկրատէսն իր բարի խրատների շնորհով շատ բարեկամներ և հաւատարիմ աշակերտներ ունեցաւ. բայց նրա թշնամիներն էլ քիչ չէին: Եւ միթէ կարելի էր, որ թշնամիներ չունենար: Սոկրատէսի խրատները շատերին չէին գիւր գալիս: Բոլոր հարուստները նըրան չէին սիրում: Սոկրատէսը սովորեցնում էր, որ աշխատելն ամօթ չէ, այլ պարապ մնալն է ամօթ. Նա ասում էր, որ Աստուած միայն աշխատաւորներին է արժանացնում ճշմարիտ երջանկութեան: Հարուստները պարապ-սարապ կեանք էին վարում և իրանց այդ պարապներով էլ հպարտանում էին: Սոկրատէսը սովորեցնում էր, որ լաւ մարդը չէ մտածում շքեղ պարելու մասին, այլ միայն մտածում է որ միշտ արդարութիւնով ապրի. միմիայն անխեզ մարդիկն են, որ իրանց ամբողջ կեանքում հոգս են քաշում լոկ հարստութիւն դիզելու: Իսկ հարուստները միայն հարստութիւն դիզելու մասին էին մտածում, միայն շռալութեան ու հարստութեւ մէջ էին տեսնում մարդուս բախտաւորութիւնը:

Սոկրատէսի թշնամիներն ասում էին միմեագրմանալի անհանգիստ մարդ է այդ Սոկրատէսի ուղղված մէջ խառնակութիւն է դցում իր ուսմունքով և մեր որդոցը մեզ դէմ է հանում: Նրանք քով և մեր որդոցը մեզ դէմ է հանում: Նրանք իրանց ուսուցին աւելի են հաւատում, քան թէ մեզ:

Սոկրատէսի ամենակատաղի թշնամիները վճռեցին, որ հարկաւոր է նրանից մի կերպ ազատուել, որովհետեւ նա մարդկանց միայն արդելք է լինում անհոգ ապրելու և կեանքի երջանկութիւններով օգտուելու:

Այնպիսի մի բանի մէջ պէտք է նրան մեղադառնում էին թշնամիները, որ նրան կարելի լինի գատարան քարշ տալ:

Եւ նրանք վճռեցին լուր տարածել, թէ Սոկրատէսը չի հաւատում աստուածներին և անբարոյականացնում է ժողովրդին:

Եւ յայտնեցին Սոկրատէսին, որ նա յանցաւոր է և պէտք է գատապարտուի: Սոկրատէսի աշակերտներին այդ բանը մեծ ցաւ և վիշտ պատճառեց, որովհետեւ նրանք լաւ գիտէին, որ իրանց ուսուցիչը մի որևէ վատ բան չի արել: Նրանք հաւաքուեցան Սոկրատէսի մօտ և խնդրում էին ու ասում.

Տես, լաւ մտածիր, ուսուցիչ, թէ գատաւորների սառաջ ինչ պէտք է խօսես քեզ արդարացնելու համար»:

Հարուստ աշակերտներից մէկն ասաց. «Եթէ գույուգուած ես և չես կարող խօսելիքիդ մասին լաւ մտածել, թոյլ առը ինձ գնալ իմ մի ծանօթ մարդու մօտ: Նրան եթէ փող տանք, նա կըգըէ, ինչ-որ գունդէտք է գատարանում ասես: Դու գեռ տանը կըպարզա, իսկ յետոյ գատաւորներին կասես և անշուշտ քեզ կարդարացնեն»:

Սոկրատէսը պատասխանեց աշակերտներին.

— Հանդարտուեցէք, սիրելիք: Ես ոչ մի ճառ չեմ

ասելու ինձ պաշտպանելու համար. իմ վարած կեանքն է իմ պաշտպանը: Երմողէն անունով աշակերտը դրա դէմ առարկեց. «Սոկրատէս, միթէ դու ինքդ չգիտես, թէ դատարանում ինչքան մեծ նշանակութիւն ունին լաւ ճառերը: Քիչ է պատահել, որ դատաւորներն արդարացը են մեղաւորին միայն նրա համար, որ նա կարողացել է ճարտարախօսութիւնով և վարպետութիւնով առողջութեաւ դատապարտուել ու բարտութիւնը, որովհետեւ նրանք այդ շնորհը չեն ունեցել»:

Սոկրատէսն ասաց. «Ինձ թող դատեն իմ դործերով, ես ոչինչից չեմ վախենում: Ես զգում եմ Աստծու ձայնը, որ ասում է, թէ մեռնելու ժամանակը հասել է: Մինչև հիմա ոյժերս ներում էին վատից հեռու մնալ, մարդկանց օգուտ բերել, իսկ այժմ հասել եմ խորին ծերութեան: Ես վախենում եմ, որ ոչ-միայն մարմնով թուլանամ, այլև հոգով: Ուրեմն աւելի լաւ է մեռնեմ:

Սոկրատէսին կանչեցին դատարան:

Սոկրատէսին դատելու համար հինգ հարիւրից աւելի մարդ էր հաւաքուել:

Հաւաքուեցան մեղադրողները. եկաւ և Սոկրատէսը: Յունաստանում էին ժամանակը դատարանի գործերը վճռուում էին քաղաքացին հրապարակում, ուր մեծ քանակութիւնով ունկնդիրներ էին հաւաքուում:

Այսպէս եղաւ և այս անդամ:

Առաջ եկան մեղադրողները և ասացին.

— Սոկրատէսը մեղաւոր է նրանում, որ չէ ընդունում մեր աստուածներին, այլ քարոզում է նոր Աստծու մասին:

Դրա դէմ Սոկրատէսն ասաց. «Դատաւորներ և քաղաքացիք, ես Մթէնքի մէջ եմ անցուցել իմ 69 տարիս: Իմ կեանքն ամենքին յայտնի է. ես սովորեցնում էի մարդկանց հրապարակների վրայ և տաճարների մօտ: Եթէ մէկը լսել է ինձանից որևէ անաստուած բան, կամ տեսել է ինձ մի վատ բան անելիս, ժողո ասէ»:

Ամենքը լուռ մնացին:

— Աստուածների կամքն իմանալու համար մենք գուշակութեւններ ենք անում. իսկ ես ասում էի, որ Աստծու կամքը մենք կարող ենք իմանալ, եթէ լսենք մեր խղճի ձայնին. որովհետեւ նա միշտ մեզ ներշնչում է Աստծու կամքը:

Դրա դէմ էլ Սոկրատէսին ոչինչ չպատասխանեցին:

Ապա կրկին խօսեցին մեղադրողները և ասացին.

— Սոկրատէսը մեղաւոր է և նրանով, որ իր ուսմունքով անբարոյականացնում է երիտասարդութիւնը:

— Քաղաքացիք, պատասխանեց Սոկրատէսը, ես ձեր որդոցն այն էի սովորեցնում, ինչ-որ ամեն մարդ պարտական է գիտենալ: Ես նրանց սովորեցը եմ, թէ ինչպէս պէտք է հասկանան Աստծու ձայնը, ինչումն է ճշմարտութիւնը և ինչումն է սուտը, ինչն է բարի և ինչն է չար: Ես հաւասարապէս սովորեցնում էի թէ ծերունուն և թէ երիտասարդին. ես ասում էի,

թէ մի ուզէք հարստութիւն և փառք, մի մտածէք ձեր մարմնի մասին, թէ ինչպէս փայփայէք նրան, այլ մտածեցէք ձեր հոգու մասին: Մտածեցէք, թէ ինչպէս ուրիշներին օգուտ տաք և ամենից բարձր համարեցէք արդար կեանքը: Ես սովորեցնում էի այնպէս, ինչպէս որ Սստծու ձախն ինձ ասում էր. իմ սովորեցրածի համար ես պատրաստ եմ ոչ թէ մէկ, այլ հազար անգամ ծանր մահ ընդունելու:

Սոկրատէսը լսեց: Մեղադրողներն էլ զգիտէին, թէ ինչ խօսեն:

Այն ժամանակ Սոկրատէսն ասաց. «Ես այլես չեմ կարող խօսել ինձ արդարացնելու համար: Ես զիտեմ, որ շատերը մեծ-մեծ ճառեր են ասում, ինչ է դատաւորների սիրու կակղանալ: ազգականներին իրանց հետ դատարան են բերում, որ նրանց արցունքն ու աղաչանքը դատաւորների գութը շարժեն: Բայց ես այդ չեմ անում: Զկարծէք թէ մարդ չունիմ այդ մասին խնդրող: Զէ՞ որ ես էլ մարդ եմ և քարից կամ ծառից չեմ ծնուած, ես էլ ունիմ ազգականներ, կին, որդիք և ունիմ անձնուէր բարեկամներ: Բայց ես նրանց չեմ կանչել, որովհետեւ այդ բանը ձեզ համար անպատճեն եմ համարում: Գութք դատավճիռը պէտք է դուրս բերէք ոչ թէ խղճալով, այլ արդարութեան ձախնին լսելով: Այդպէս է պարտաւորեցնում ձեզ ձեր իսիդը և դրա վրայ են հիմնուած օրէնքները»:

Դատաւորներն սկսեցին միմեանց հետ խորհուրդ անել: Դատաւորների մէջ էլ Սոկրատէսը թէեւ այն-

պիսի թշնամիներ ունէր, որոնք թակարդ էին պատրաստում նրա դէմ, սակայն համարեա նրանց կէս մասը վճռեց, որ Սոկրատէսը ոչ մի բանով մեղաւոր չէ: Բայց այնուամենայնիւ հակառակորդները յաղթեցին, և դատաւորներն ասացին.

«Սոկրատէսը մեղաւոր է»:

Մեղադրողներն ասացին. «Մեղաւոր է և մահւան արժանի»:

Սոկրատէսը հանդարտօրէն լսեց և ասաց դատաւորներին.

— Մեղադրողները պահանջում են մահ: Բայց օրէնքն ինձ իրաւունք է տալիս ուրիշ պատիժներ ընտրելու. ուրեմն լսեցէք ինձ: Ես կարող եմ մահու փոխանակ խնդրել մինչի մահ բանտարկութիւն: Բայց ինչի՞ պէտք է բանտի մէջ անցուցած կեանքը: Անօգուտ է նա ուրիշների համար և ծանր ինձ համար: Օրէնքի գօրութիւնով ես կարող եմ ուրիշ երկիր ընտրել և հեռանալ: Բայց ինձ՝ ծերուկիս համար դըժուար կըլինի օտար երկրում թափառել: Օրէնքը մոյլ է տալիս ինձ մեծ գումարով տուգանք վճարել: Ինքս փող չունիմ, բայց իմ բարեկամներն ու աշակերտները՝ Պղատոնը, Կրիտոնը և ուրիշներն ուրախ ութիւնով կրտան, ինչքան որ պէտք լինի: Համաձայն էք զրան, դատաւորներ:

Դատաւորները ոչինչ չպատասխանեցին նրան, այն ժամանակ Սոկրատէսն ասաց.

— Եթէ որ ես ինձ մեղաւոր զգայի՛ պատրաստ կըլինէի ամենածանր պատիժ կըլելու, բայց իմ խիզճա

արդար է: Ես ոչ ոքի վնաս չեմ տուել, աղնիւ կերպով ծառայել եմ հայրենիքիս: Դուք պարտական էք իմ ծառայութիւնների ու աշխատանքիս համար ինձ մեծ պարզե տալ, որին արժանի է մեղանում երկար ժամանակ ծառայած քաղաքացին. այսինքն՝ դուք պարտական էք մինչև իմ մահս ինձ պահել ընդհանուրի հաշտով, որովհետեւ ես ծերացել եմ ընդհանուրի օգուտի համար աշխատելով: Իսկ դուք, քաղաքացիք, դրա փոխանակ ինձ դատարան կանչեցիք, հաւատացիք թշնամիներիս խօսքերին և մոռացաք իմ արածները:

Դատաւորները վիրաւորուեցան, որ Սոկրատէսը համարձակուեց ցոյց տալ նրանց, թէ նրանք ինչպէս պէտք է վարուեն:

—Այդ մենք առանց նրան էլ զիտենք, ասացին դատաւորները միմեանց:

—Դուք աւելի նրան էք լսում, զրգում էին դատաւորներին Սոկրատէսի թշնամիները. կամ գուցէ դուք ևս կամենում էք նրա աշակերտները դառնալ:

—Եւ իրաւ որ ժամանակ է քննութիւնը վերջացնելու, աղմուկ բարձրացրին դատաւորները:

Եւ նրանք այլևս երկար բարակ խորհուրդ չարին միմեանց հետ և այսպիսի վճիռ կայացրին.

«Սոկրատէսը դատապարտում է մահւան, նա պէտք է թոյն խմի»:

Սոկրատէսն առանց վրդովելու լսեց դատավճրը և ասաց դատաւորներին.

«Ես դաւում եմ ոչ թէ իմ վիճակի համար, այնրա համար, որ դուք խայտառ ակեցիք ձեզ և ձեր ժողովրդին, որովհետեւ անմեղ մարդու դատապարտեցիք: Իմ համաքաղաքացիններ, դուք իզուր շտապեցիք ազատուել այն անհանգիստ մարդուց, որ ոչ ոքից չէր վախենում և միայն ճշմարտութիւն էր քարոզում: Ճատ շտապեցիք. առանց այն էլ մահը սպասում էր ինձ՝ ծերունուս: Զեղանից միայն այս եմ խնդրում, որ երբ իմ որդիքը մեծանան՝ սովորեցրէք նրանց այն, ինչ-որ ես ձեզ եմ սովորեցրել: Եթէ նկատէք, որ որդիքս ձգտում են հարստութեան և պատի՛ նախատեցէք նրանց անպէս, ինչպէս որ ես ձեզ և ձեր որդոցն էի նախատում: Դրանով դուք նրանց բարութիւն արած կըլինիք, ինձ էլ վարձատրած իմ արածի համար: Իսկ հիմա մնաք բարեաւ, հասել է մեր բաժանուելու ժամը, դուք մնում էք ապրելու համար, իսկ ես դնում եմ մեռնելու: Բայց թէ որիս վիճակն է աւելի լաւ, այդ միայն Աստծուն է յայտնի»:

XI.

ՍՈԿՐԱՏԵՍԸ ԲԱՆՏԻ ՄԵջ.

Յունաստանում կին ժամանակ տօներին դատապարտուածներին չէին պատժում՝ մեղք էին համարում, այլ սպասում էին տօների վերջանալուն: Սոկրատէսի դատավճռից յետոյ իսկոյն տօներն սկսուե-

ցան, ուստի Սոկրատէսին առժամանակ բանտ դըին:
Այնտեղ անցկացրեց նա իր կեանքի վերջին ՅՈ օրերը:

Ամեն օր նրան այցելում էին իր աշակերտները,
որոնց նա շարունակում էր սովորեցնել, իսկ միայնակ
մնացած ժամանակն էլ ուսանաւորներ էր գրում: Նա
ոչ վհատութիւն էր զգում և ոչ մահից վախենում:
Տօները վերջանալու մօտ էին:

Աշակերտները դառնութիւնով էին մշածում,
որ շուտով պիտի բաժանուին իրանց թանկագին
ուսուցչից: «Արգեօք չի կարելի նրան մի կերպ ազա-
տել», — Հարցնում էին նրանք միմեանց:

Վճռեցին, որ բանտի պահապանին կաշառեն,
գիշերով Սոկրատէսին բանտից հանեն և ծածուկ
տանեն նրան ուսար երկիր:

Այդ մասին Սոկրատէսի հետ պէտք է խօսէր
Կրիտոն անունով աշակերտը: Ընդամենը երկու օր
էր մնացել տօները վերջանալուն, պէտք էր շտապել:
Ուշ երեկոյեան աշակերտները ցրուեցան և վճռեցին,
որ առաւտեան շատ վաղ Կրիտոնը գնայ և Սոկրա-
տէսին համոզի:

Կրիտոնն ամբողջ զիշեր չքննեց: Այն ուրախ միտ-
քը, որ էլի մի միջոց կայ Սոկրատէսին ազատելու
համար՝ նրա քունը փախցրել էր: Լուսայաւ թէ չէ՝
նա վերկացաւ, հազնուեց և զնաց բանտի կողմը:
Պահապանը նրան ճանաչում էր, ուստի թողեց, որ
նա գնայ Սոկրատէսի մօտ: Սոկրատէսը գեռ քնած
էր: Կրիտոնը զգուշութիւնով մտաւ նրա սենեակը և
նստեց անկողնու մօտ: Սոկրատէսը բաւական ժամա-

նակ չզարթեց. Կրիտոնը նայելով նրա խաղաղ դէմքին՝
մնացել էր զարմացած, թէ ինչպէս է նա կարողանում
հանգիստ քնել, քանի որ զիտէ, թէ մի փոքր ժամա-
նակից յետոյ մեռնելու է: Սոկրատէսը երբ աչքերը բա-
ցեց, շատ զարմացաւ, երբ Կրիտոնին տեսաւ իր մօտ:
— Երեւի արդէն շատ ուշ է, ասաց նա. դու ինձ
ինչո՞ւ չզարթեցրիր, Կրիտոն:

— Ոչ, դեռ շատ վաղ է, — պատասխանեց Կրի-
տոնը, — արեւ դեռ չէ ծագել: Ես հիանում էի քո
հանգիստ քնով և ուրախանում էի քեզ համար, որ
դու քնիդ մէջ կարող ես մոռանալ քեզ հասանելիք
դժբախտութիւնը — քեզ սպասող մահը: Ես միշտ զար-
մացել եմ քո հանգստութեան վրայ, բայց չէի սպա-
սում, թէ այս սարսափելի ժամին էլ դու կարող ես
հանգիստ լինել:

Սոկրատէսը ժպտաց և ասաց. — «Միթէ նոր ես
ճանաչում քո ուսուցչին: Դու ինձ այն ասա. ինչո՞ւ այսօր
այսպէս վաղ ես եկել ինձ մօտ: Երեւի նրա համար,
որ քնած դրութեան մէջ տեսնես ինձ:

— Ոչ, դւա համար չէ, այլ ես եկել եմ քեզանից
մի բան խնդրեմ: Այդ միեւնոյնը խնդրում են քեզա-
նից և քեզ անձնուէր շատերը... Կրիտոնն անհա-
մարձակութիւնից չկարտղացաւ վերջացնել:

— Ճուտ ասա, տաքացած ասաց Սոկրատէսը:

— Սոկրատէս, մենք վճռել ենք քեզ մահից ա-
զատել: Կայ մի միջոց՝ ծածուկ կերպով կարելի է
բանտից քեզ վախցնել:

Սոկրատէսի երեսը խոժուուեց. նա տխուը և

Խիստ կերպով նայեց Կրիտոնին:

— Լսիր ինձ, սիրելի ուսուցիչ, ասաց Կրիտոնը,
— չէ՞ որ դու անարդար կերպով դատապարտուեցար:
Միտք արա, թէ դու էլի որքան օգուտ կարող եւ
բերել մարդկանց: Խղճա քո մանուկներին, խղճա
մեղ և համաձայնիք ալստեղից փախչել: Արդէն ա-
մեն ինչ մենք կարգադրել ենք: Ես այնտեղ լաւ ծա-
նօթներ ունիմ, նրանք ուրախութիւնով քեզ իրանց
մօտ կընդունեն: Այնտեղ կընդենք և քո երեխանե-
րին: Այնտեղ դու նրանց կըկրթես և նրանք չեն
մնալ որը ու անտէր: Բաւական էլ փող ունինք:
Դու գիտես, որ ես հարուստ եմ, ինչ-որ ունիմ քեզ
կրտամ, բայց ինձանից միւս աշակերտներդ էլ փող
են պատրաստել որ քեզ ազատեն, որովհետեւ դու մեզ
համար ամեն բանից թանդ ես: Աղաչում եմ, համա-
ձայնիր փախչել, պէտք չէ այլևս մտածել. Ժամա-
նակը կարճ է. այդ միայն այս գիշեր կարելի է գը-
լուս բերել:

Կրիտոնը խօսում էր տաք-տաք և լաց էր լի-
նում, բայց Սոկրատէսի դէմքից երևում էր, որ
Կրիտոնի խօսքերը չեն ազդում նրա վրայ: Երբոք
Կրիտոնը վերջացրեց իր ասելիքը, Սոկրատէսն ասաց.

— Ճնորհակալ եմ քեզանից, Կրիտոն: Ես գի-
տեմ, որ բարի զգացմունքից դրդուած դու եկել ես
ինձ մօտ: Ես գիտեմ, որ ամենքդ ինձ սիրում էք և
շնորհակալ էք ինձանից: Բայց չպէտք է միմիայն զգաց-
մունքին լսել: Իմ ազատութեան համար ես պէտք է
խարեմ և ուրանամ իմ խօսքը: Դատարանում ես

ասացի, որ ընդունում եմ վճիռը, որ պատրաստ եմ
քարոզածներիս համար տանջուել, ուստի ոչ մի չար-
չարանք չպէտք է ստիպէ ինձ այդ ամենից հրաժա-
րուելու: Ասենք դուք ինձ ազատուցիք բանտից, բայց
ես այլևս այն մարդը չեմ մենեւ էնչ-որ բանտից ա-
ռաջած ու, այլ կըլինիմ մի խաբեբայ: Արդեօք այդ է
ձեր ուղածը:

Կրիտոնն զգաց, որ Սոկրատէսը ճշմարիտ է ա-
սում, բայց նրան ազատելու մտքից չէր կարող հրա-
ժարուել:

— Ով որ քեզ գիտէ, ասաց Կրիտոնը. նա չի
հաւատալ, թէ դու խաբեբայ ես. զու կըխաբես մի-
այն վատ մարդկանց, որոնք անարդարօրէն քեզ
դատեցին,—իսկ ուրիշները կուրախանան քո ազա-
տուելու համար:

— Ոչ, Կրիտոն, զրական կերպով պատասխանեց
Սոկրատէսը, ես կըխաբեմ ոչ-միայն իմ թշնամինե-
րին, այլև բոլոր մարդկանց և իմ խղճին: Ես իմ
ամբողջ կեանքում սովորեցնում էի, որ մարդ երբէք
չպէտք է անարդար զործ կատարի. այժմ եթէ ես
ինքս այլպէս անեմ, այն ժամանակ ով կըհաւատայ
ինձ և իմ սովորեցրածին: Բանտից փախչելով ես կը-
փախչեմ իմ թշնամիներից, բայց իմ խղճի ձայնից ես ուր
փախչեմ: Թող ուրեմն այդ անիբագործելի մտադրու-
թիւնդ և միասին քաջութիւնով սպասենք այն բա-
նին, որից փախչել չենք կարող:

Կրիտոնը տեսաւ, որ անկարելի է նրան ազա-

տել, տիսուր ու տրտում գնաց միւս աշակերտների մօտ՝ Սոկրատէսի պատասխանը յայտնելու:

XII.

ՍՈԿՐԱՏԵՍԻ ՎԵՐՋԻՆ ԽՈՍՍԿՑՈՒԹԻՒՆԸ.

Պատժի օրը հասաւ: Այն ժամանակները սովորութիւն կար, արևը դեռ մայր չմտած պատժիմ պիտի իրադորձուէր: Առաւոտւանից Սոկրատէսի աշակերտները հաւաքուեցան բանտի դռների մօտ: Նըրանցից շատերը դառն արտասուք էին թափում: Գուրս եկաւ բանտի պահապանը և ասաց սպասողներին. «Խսկոյն Սոկրատէսի շղթաները կըքանզեն, այն ժամանակ ներս կըթողնեմ ձեզ»:

Քիչ ժամանակից յետոյ բանտի դռները բացուեցան: Աշակերտները ներս մտան: Սոկրատէսն անկողնի մէջ էր. շղթաներից նոր էին արձակել: Անկողնի մօտ կանգնած էր նրա կինը՝ իր ամենափոքր որդին գիրկը: Նա երբ տեսաւ ամուսնու աշակերտներին՝ հեկեկալով ասաց. «Վերջին անգամ նըրանք քեզ մօտ են եկել, Սոկրատէս, և վերջին անգամ պէտք է քեզ լսեն: Այսօրւայ քո խօսակցութիւնդ կըինի վերջինը»:

Կինն սկսեց իր զլիսի մագերը փետտել և լաց լինել. Սոկրատէսը խնդրեց աշակերտներին, որ նրան տանեն տուն:

Սոկրատէսն ուզեց վերկենալ, բայց նրա ոտ-

ները ծանրացել էին շղթաներից: Նա սկսեց շկել իր ոտները և մի քիչ թեթևութիւն զգաց:

— Տեսէք, միրելի բարեկամներս, ասաց նա աշակերտներին, — ամեն տանջանքից յետոյ կայ և միսիթարութիւն: Քիչ առաջ այս ոտքս տանջում էր շղթաների ծանրութիւնից, բայց հիմա թեթև է: Այդպէս է ամեն տանջանքի ժամանակ և յետոյ: Ես հիմա ոտի էլ կարող եմ կանգնել:

Աշակերտները շրջապատեցին Սոկրատէսին. Նըրանք թէ նրան լսել էին ուզում և թէ հետը խօսել: Բայց գժուարանում էին մի խօսք ըերաններիցը հանել, արտասուքը խեղդում էր նրանց ձայնը և նրանք ուսուցչի մահւան դառն ըսպէի մասին էին միայն մտածում: Իսկ այդ մսախն ո՞նց պէտք է խօսէին: Ուսուցչը հասկացաւ նրանց սրտին:

— Տեսնում եմ և գիտեմ, ասաց նա, որ գուք ցաւում էք իմ վրայ և ոչ թէ միայն ցաւում էք, այլև իմ փոխարէն սարսափում էք: Բայց նայեցէք ինձ. ես հանգիստ եմ, ոչ ցաւում եմ և ոչ էլ սարսափում: Իմ հոգին հանգիստ է և մաքուր: Ես կեանքըս վերջացնում եմ բանտի մէջ, և մահւան եմ դատապարտուած: Մարդիկ այդ բանը արատ են համարում. բայց միթէ այդ պակասութիւն է, երբ դունչմարտութեան համար պիտի տանջուիս և ոչ թէ վատ գործի: Մարդիկ ինձ զրապարտեցին և դատապարտեցին, բայց ես չեմ կարող նրանց վրայ բարկանալ և տուել նրանց: Ես գիտեմ, որ նրանք իրանց անխելքութիւնից այդպէս վարուեցան: Ես նախատեցի նրանց,

ցոյց տուի նրանց իրանց սխալները՝ իրանց լաւութեան համար, բայց նրանք ինձ չհասկացան և կարծեցին, թէ ես չար եմ կամենում: Նրանք անխելք երեխալի պէս վարուեցան: Այդ ես օրինակով կըպարզեմ: Դիցուք հիւանդ երեխաներ կան և մէկը նըրանց խնամում է: Միքիչ ժամանակից յետոյ դրա տեղը նշանակում է մի ուրիշը, որ բժիշկ է: Սա սկսում է աշխատել, որ հիւանդներին առողջացնի: Ի՞նչ էք կարծում հիւանդները որին աւելի կըհաւանէին և որին կուգենալին, որ իրանց մօտ մնայ: Յայտնի բան է առաջինին, որ իրանց ամեն ասածը կատարում էր: Իսկ բժշկի համար կասէին. «Այս մարդը մեզ չարչարում է, փակում է, չի թողնում ազատ ուտենք խմենք, դառը դեղեր է տալիս, կտրում է, փառում է, ևալն ևալն. սրան վրանտենք, իսկ աւելի լաւն այն կըլինի, որ սա բոլորովին չկերագառնալ»: Իմ հակառակորդներն ինձ չճանաչեցին այնպէս, ինչպէս այն երեխաները՝ բժշկին:

Այդ ասելուց յետոյ, Սոկրատէսը կանդ առաւ. նա նկատեց, որ Կրիտոնն ուզում է խօսել:

— Սոկրատէս, ասաց Կրիտոնը, դու լաւ զիտես, որ քո ամեն մի խօսքը մեզ համար թանդ արժէ, սակայն, խնդրում ենք, դատարիր խօսելուց: Բանտապետը քիչ առաջ մեզ ասաց, թէ ով որ կեանքի վերջին ժամերին շատ է խօսում և տաք-տաք, նըրա վրայ թոյնն ուշ է ներգործում և նա ստիպուած պիտի լինի աւելի շատ խմելու:

Սոկրատէսը պատասխանեց.

— Բանտապետին իմ կողմից շնորհակալութիւն յայտնեցէք իր տուած խորհրդի համար և խնդրեցէք, որ աւելի մեծ չափով թոյն պատրաստի: Ես պատրաստեմ ոչ թէ մի անգամ խմելու, այլ երկու, երեք, որքան որ հարկաւոր լինի: Թոյնն իր ժամանակին իր դորձը կանէ, իսկ մինչև այդ ժամանակը թօղէք ինձ խօսեմ: Ես էլի շատ բաների մասին ուզում եմ ձեզ հետ խօսել: Աւելի մօտ նստեցէք ինձ:

Սոկրատէսը նստած էր անկողնի վրայ, իսկ նրա շուրջ ինչպէս պատահել էր նստոտել էին աշակերտները: Սոկրատէսին ամենից մօտիկ նստած էր Փէտոն անունով աշակերտը: Նա շատ երկար սիրուն մազեր ունէր: Սոկրատէսին գիւր էր զալիս խօսակցութեան ժամանակ նրա մազերը շոյել: Իսկ այդ ժամանակ նա նստած էր Սոկրատէսին մօտիկ՝ ցածր աթոռի վրայ: Սոկրատէսը ձեռքով շոյում էր նրա գլուխը:

— Հը՛, Փէտոն, ասաց նա. վաղը այս քո գեղեցիկ մազերդ ուրտեղ կըլինին:

Յոյները սովորութիւն ունէին սղի պատճառով կտրել իրանց մազերը և գնել սիրեցեալի գագաղի վրայ: Այդ բանն էր ակնարկում Սոկրատէսը: Ուսուցչի այդ խօսքերը սաստկացրին աշակերտների վիշտը. և նրանք լաց եղան:

Սոկրատէսն ասաց. «Աիրելիք, ես չեմ վախենում մեռնելուց: Առոսակելի է ոչ թէ մահը, այն անխելք և արատով ապրելը»:

XIII.

ՍՈՂԲԱՏԷՄԻ ՄԱՀ.

Սոկրատէսը լուեց: Աշակերտներն սպասում էին, որ նա էլի կը լիսարկ: Բայց նա ասաց.

Արդէն հասել է ժամը, զնամ լուացուեմ, որ իմ մարմնի լուանալը ուրիշներին բեռ չլինի: Իսկ դուք սպասեցէք ինձ այստեղ և կացէք մինչեւ վերջը:

Սոկրատէսը զնաց միւս սենեակ լուացուելու: Նրա հետ գնաց և կրիտոնը: Իսկ միւս աշակերտները լիշում էին նրա վերջի ասածները, խօսում էին նրա մահւան մասին և ցաւում էին, թէ իրանք առանց իրանց թանկագլխ գաստիարակի ինչպէս պէտք է ասլրեն:

Մթնեց: Սոկրատէսի սենեակը մտան նրա աղգականները, կինն ու որդիքը: Որդիներից մէկը միքիչ մեծ էր, իսկ երկուսը զեռ շատ փոքր էին: Քիչ յետոյ ներս եկաւ և Սոկրատէսը: Նա սկսեց նրանց վերջին մնաք բարեաւն ասել: Կանալք այնպէս սարսափելի ձախող սկսեցին հեկեկար որ Սոկրատէսը խնդրեց նրանց հեռացնել:

Աշակերտներն այդ ժամանակ Սոկրատէսին ասացին, որ նա յալտնի իր վերջի ցանկութիւնը:

Կարելի է երիխաններիդ համար մի բան ես ուզում կարգադրել, մենք ուրախութիւնով կը կատարենք քո ասածը:

Սոկրատէսը նրանց պատասխանեց: — Ես ոչ մի

հարստութիւն չունիմ, որ կարգադրեմ: Ի՞նչպէս ես եմ ձեզ սովորեցրել այնպէս էլ դուք վարուեցէք իմ զաւակներիս հետ և այն ժամանակ կիմանաք, թէ ինչ է հարկաւոր նրանց:

— Իսկ ինչպէս կը հրամացի, որ քեզ թաղենք, Սոկրատէս, ասաց կրիմոնը:

— Ի՞նչու ես դու այդպիսի բան հարցնում ինձ,— նախատելով պատասխանեց նրան Սոկրատէսը: Միթէ դու չգիտես, որ իմ կեանքում ես մարմնուս խնամք էի տանում միայն նրա համար, որ նա հոգուս ծառալէ, բայց քանի որ հողիս թողնելու է մարմինս, այնուհետև ինչ ուզում են՝ թող անեն. միթէ միւնոյն չէ:

Սոկրատէսը թեք ընկաւ անկողնի վրայ, որ էլի խօսի աշակերտների հետ, բայց յանկարծ դուռը բացուեց և բանտապետը ներս մտաւ դատարների հրամանը յաբունելու:

— Սոկրատէս, ասաց նա, երբ ես գնացի միւս դատապարտուածներին յայտնելու, թէ ժամանակը արդէն հասել է, պէտք է իսմեն թոյնը, նրանք ինձ հայկոյանքով ու անէծքով ընդունեցին: Բայց ես քեզանից այդ չեմ սպասում, որովհետեւ քեզպէս բարի և արդար մէկը դեռ չեմ տեսած այս բանտում: Դու ինձ վրայ չպէտք է բարկանաս, այլ պէտք է անիծես նրանց, որոնք քո մահւան պատճառ են դառնում: Դու արդէն զիտես, թէ ինչ պիտի ասեմ քեզ: Մնաս բարեաւ: Աշխատիր քաջութիւնով տանել այն բոլորը, ինչոր չէ կարելի հեռացնել:

Բանտապիտն այդ ասաց թէ չէ, իսկոյն հեռացաւ, որովհետև արտասուքը խեղդում էր նրան:

— Մասս բարեաւ և դու, ասաց Սոկրատէսը, Իրանից հեռացող բանտապետին: Ինչ-որ պէտք է՝ կը-կատարեմ: Յետոյ գիմելով աշակերտներին ասաց. — Նա յաճախ զալիս էր ինձ հետ զրուցելու: Եւ ինչպէս անկեղծօրէն ափսոսում է լինձ: Սիրելիք, ժամը հասաւ. ասացէք, թող բերեն թոյնը:

— Ինչո՞ւ ես շատապում, սկսեց համոզել նրան աշակերտներից մէկը: — Արևը դեռ չի անցել սարի յետեւ: Ուրիշ դատապարտուածներ արևը մտնելուց յետոյ էլ իրանց մերձաւորների հետ դեռ ուտում խմում են և ապա թէ թոյն ընդունում: Դեռ ժամանակ կայ:

— Ուրիշներն ինչպէս ուզում են, թող այնպէս անեն. երկի նրանց համար թանգ է կեանքը: Իսկ իմ կեանքն արդէն վերջացել է, հարկաւոր չէ նրան ձգձգել. արեմն ինչ որ խնդրեցի, այն բերէք, ասաց Սոկրատէսը:

Աշակերտներից մէկը դռան մօտ կանգնած պահապանին նշանով հասկացրեց, որ գնայ թոյնը բերի: Դրանից յետոյ ներս մտաւ բանտապետը թոյնի բաժակը ձեռին:

— Ճնորհսկալ եմ քեզանից, բարեկամ, ասաց նրան Սոկրատէսը. այժմ սովորեցրու, թէ ինչ պէտք է անեմ:

— Թոյնը խմելուց յետոյ, պատասխանեց բանտապետը, դու այնքան պէտք է ման դաս, մինչև որ

ոտներդ թուլանան, այն ժամանակ պառկիր անկող-նիդ վրայ, որովհետև ոտներիդ թուլանալը նշան է որ թոյնը սկսել է ներգործել:

Առանց վրդովուելու Սոկրատէսը նրա ձեռքից առաւ թոյնի բաժակը և մինչև տակը խմեց: Ամբողջ օրը աշակերտները քաջ էին, բայց այդ րոպէին չը-կարողացան իրանց զսպել և սկսեցին դառնօրէն հեկեկալ: Միայն Սոկրատէսն էր հանդարտ:

— Ի՞նչ էք անում, բարեկամներս, համոզում էր նրանց Սոկրատէսը, — ես կանանց և երեխայոց տուն զրկեցի, որ չտեսնեմ նրանց լացը, իսկ դուք նրանցից պակաս չէք եղել: Դուք այդպէս էք ինձ լսում: Բանտապետի ասածի համաձայն թոյնը խմելուց յետոյ Սոկրատէսը չդատարեց սենեակի մէջ ման գալուց. երբ ստները ծանրացան՝ պառկեց անկողնի վրայ: Աշակերտները շրջապատեցին նրան:

Բանտապետը ծոտ եկաւ և սկսեց ուժով սեղմել նրա ոտքը:

— Յաւ զգո՞ւմ ես, հարցրեց նա:

— Ոչ, պատասխանեց Սոկրատէսը:

Բանտապետն աւելի վերև սեղմեց ոտքը, բայց Սոկրատէսը էլի ոչինչ չզգաց:

— Այդ նրանից է, ասաց բանտապետն աշակերտներին, որ մարմինն արդէն սկսել է սառել և ընդարձանալ: Երբ սառնութիւնը հասնի սրտին, այն ժամանակ կը մեռնի:

— Բարեկամներս, մեռնում եմ, շնորհակալ եղէք Աստուածանից, ասաց Սոկրատէսը:


Աշակերտներն ընկան նրա վրայ. սկսեցին նրան
կանչել, բայց նա այլևս չէր պատասխանում: Յետոյ
նրա մարմինն ամբողջապէս ցնցուեց և առասուաց: Աշա-
կերտների առաջ պառկած էր իրանց սիրելի ուսուց-
չի անշունչ դիակը: Նրանցից մէկը կռացաւ և փա-
կեց աչքերը:

Ահա այսպէս ապրեց և մեռաւ Սոկրատէսը.
բայց նրա քարոզածները գեռ կենդանի են:

Նրա լաւ աշակերտները շարունակեցին նրա
օգտակար գործունէութիւնը. սովորեցնում էին մարդ-
կանց բարութիւն և արդարութիւն, իսկ իրանց մեծ
և իմաստուն ուսուցչի խօսածները գրի առան: Եւ
դրանց գրուածքներով մենք ճանաչեցինք Սոկրա-
տէսին:

Սոկրատէսն ապրում էր Քրիստոսից 400 տարի
առաջ:





938

9013

0025184

ՀՀ Ազգային գրադարան



NL0025187

